



Համարը N 867
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2002.07.17/25(200)
Հոդ. 605

Տեսակը Ինկորպորացիա
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան

Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ
Վավերացնող մարմինը ՀՀ Նախագահ
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 27.07.2002

Ընդունման ամսաթիվը 29.06.2002
Ստորագրման ամսաթիվը 29.06.2002
Վավերացման ամսաթիվը 29.06.2002
Ուժը կորցնելու ամսաթիվը

☐ Ծանուցում

04.05.23 N 672-Ն որոշումն ունի անցումային դրույթ:

☒ Կապեր այլ փաստաթղթերի հետ

☒ Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ ԴԵՂԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՍ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ, ԴԵՂԵՐԻ ՄԵԾԱԾԱԽ ԻՐԱՑՄԱՆ, ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ԵՎ ՆՇՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
29 հունիսի 2002 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

(որոշումը խմբ. 20.09.12 N 1239-Ն)

29 հունիսի 2002 թվականի N 867

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՍ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ, ԴԵՂԵՐԻ ՄԵԾԱԾԱԽ ԻՐԱՑՄԱՆ, ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ԵՎ ՆՇՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(վերնագիրը խմբ. 20.09.12 N 1239-Ն, փոփ. 04.06.14 N 573-Ն, լրաց. 08.02.18 N 105-Ն, 23.03.23 N 359-Ն)

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասին, 12-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին, 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերին, 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին և 17-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

(նախարարը խմբ. 26.01.23 N 120-Ն)

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետությունում դեղերի արտադրության իրականացման լիցենզավորման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետությունում դեղերի արտադրության իրականացման լիցենզիայի NN 1 և 2 ձևերը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետությունում դեղատնային գործունեության իրականացման լիցենզավորման կարգը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) Հայաստանի Հանրապետությունում դեղատնային գործունեության իրականացման լիցենզիայի NN 1 և 2 ձևերը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) Հայաստանի Հանրապետությունում կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման իրականացման լիցենզավորման կարգը՝ համաձայն N 5 հավելվածի.

6) Հայաստանի Հանրապետությունում կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման իրականացման լիցենզիայի NN 1 և 2 ձևերը՝ համաձայն N 6 հավելվածի.

7) *(Էնթակետն ուժը կորցրել է 04.06.14 N 573-Ն)*

8) *(Էնթակետն ուժը կորցրել է 04.06.14 N 573-Ն)*

9) Հայաստանի Հանրապետությունում դեղերի մեծածախ իրացման լիցենզավորման կարգը՝ համաձայն N 9 հավելվածի.

10) Հայաստանի Հանրապետությունում դեղերի մեծածախ իրացման լիցենզիայի NN 1 և 2 ձևերը՝ համաձայն N 10 հավելվածի.

11) դեղատնային գործունեության, բժշկական օգնության և սպասարկման իրականացման, ներառյալ՝ այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու կամ լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման վայրի փոփոխման լիցենզիա ստանալու համար ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկությունների համապատասխանության ստուգաճշտումը լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման վայրում ուսումնասիրության միջոցով իրականացնելու կարգը՝ համաձայն N 11 հավելվածի.

12) պոլիկլինիկաների (խառը, մեծահասակների և մանկական), առանձին մասնագիտացված կաբինետների, ընտանեկան ավագ բուժաշխատողի գրասենյակների, գյուղական ամբուլատորիաների, գյուղական առողջության կենտրոնների, բուժակ-մանկաբարձական կետերի, կանանց կոնսուլտացիաների գործունեության համար անհրաժեշտ տեխնիկական և մասնագիտական որակավորման պահանջներն ու պայմանները՝ համաձայն N 12 հավելվածի.

13) հիվանդանոցային պայմաններում (մասնագիտացված) բժշկական օգնության և սպասարկման համար անհրաժեշտ տեխնիկական և մասնագիտական որակավորման պահանջներն ու պայմանները, ընդհանուր թերապևտիկ բաժանմունքների գործունեության համար անհրաժեշտ տեխնիկական և մասնագիտական որակավորման պահանջներն ու պայմանները՝ համաձայն N 13 հավելվածի.

14) կալանավորված անձանց և դատապարտյալների համար ստեղծված բժշկական կազմակերպությունների կողմից տրամադրվող բժշկական օգնության ու սպասարկման համար անհրաժեշտ տեխնիկական և մասնագիտական որակավորման պահանջներն ու պայմանները՝ համաձայն N 14 հավելվածի.

15) ստոմատոլոգիական կենտրոնների, պոլիկլինիկաների և կաբինետների կառուցվածքին, շահագործմանը և տարածքներին ներկայացվող պահանջներն ու պայմանները՝ համաձայն N 15 հավելվածի.

16) ստոմատոլոգիական կենտրոնների, պոլիկլինիկաների և կաբինետների գործունեության համար անհրաժեշտ տեխնիկական հագեցվածության և մասնագիտական որակավորման պահանջներն ու պայմանները՝ համաձայն N 16 հավելվածի.

17) Հայաստանի Հանրապետությունում բժշկական արտադրատեսակների արտադրության լիցենզավորման կարգը՝ համաձայն N 17 հավելվածի.

18) Հայաստանի Հանրապետությունում բժշկական արտադրատեսակների արտադրության լիցենզիայի NN 1 և 2 ձևերը՝ համաձայն N 18 հավելվածի.

19) Հայաստանի Հանրապետությունում բժշկական արտադրատեսակների սպասարկման լիցենզավորման կարգը՝ համաձայն N 19 հավելվածի.

20) Հայաստանի Հանրապետությունում բժշկական արտադրատեսակների սպասարկման լիցենզիայի NN 1 և 2 ձևերը՝ համաձայն N 20 հավելվածի:

(1-ին կետը փոփ. 04.06.14 N 573-Ն, լրաց. 19.09.19 N 1241-Ն, 08.02.18 N 105-Ն, 22.10.20 N 1710-Ն, 26.01.23 N 120-Ն, 23.03.23 N 359-Ն)

2. Սահմանել, որ դեղերի որակն ապահովող հիմնական տեխնոլոգիական պրոցեսների նկարագրության, արտադրության տեխնիկական հագեցվածության, արտադրության կառուցվածքի գործառնական ստորաբաժանումների, արտադրության և որակի հսկման կազմակերպման փորձաքննությունը կարող է իրականացվել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից՝ լիցենզիայի առկայության դեպքում, ինչպես նաև համապատասխան լիցենզիա ունեցող այլ կազմակերպությունների կողմից:

3. Սահմանել, որ լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը կարող են լիցենզավորող մարմին հանձնվել առձեռն կամ փոստով կամ էլեկտրոնային համակարգի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության

կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 24-ի N 1283-Ն որոշմամբ սահմանված կարգով: Առձեռն փաստաթղթեր ներկայացնելիս պետք է ներկայացվեն դրանց բնօրինակները, իսկ պատճենահանումն անվճար իրականացնում է լիազոր մարմինը:

(3-րդ կետը խմբ. 30.06.16 N 669-Ն, 08.02.18 N 105-Ն)

3.1. Մահմանել, որ՝

1) դեղատնային գործունեության, բժշկական օգնության և սպասարկման իրականացման, ներառյալ՝ այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու կամ լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման վայրի փոփոխման լիցենզիա ստանալու համար ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկությունների համապատասխանության ստուգաճշտումը լիազոր մարմնի կողմից իրականացվում է լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման վայրում ուսումնասիրություն իրականացնելու միջոցով, որի արդյունքների հիման վրա կազմվում է արձանագրություն:

(3.1-ին կետը լրաց. 19.09.19 N 1241-Ն, 22.10.20 N 1710-Ն)

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 1996 թվականի փետրվարի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում բժշկական և դեղագործական գործունեության պետական մասնագիտական լիցենզավորման մասին» N 36, հունիսի 24-ի «Հայաստանի Հանրապետությունում բժշկական և դեղագործական գործունեության պետական մասնագիտական լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 188, 1997 թվականի սպրիլի 1-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 1996 թվականի փետրվարի 9-ի N 36 և հունիսի 24-ի N 188 որոշումների մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» N 59 և 1998 թվականի հոկտեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետությունում արդյունաբերական եղանակով դեղերի արտադրության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 616 որոշումները:

Հավելված N 1

ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի N 867 որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է առողջապահության բնագավառում իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ անձինք) կողմից մարդու կամ կենդանիների համար օգտագործվող, ինչպես նաև հետազոտական նպատակներով լիցենզավորման ենթակա դեղերի արտադրության (այսուհետ՝ դեղերի արտադրություն) իրականացման լիցենզավորման կարգը (այսուհետ՝ կարգ)՝ համաձայն «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) պահանջների:

2. Դեղերի արտադրությունը դեղերի սերիական թողարկումն է, որն ընդգրկում է հետևյալ արտադրական գործընթացները՝ էլանյութերի ձեռքբերումը, արտադրական տեխնոլոգիական գործընթացները, որակի հսկումը, փաթեթավորումը (վերափաթեթավորում), պիտակավորումը (վերապիտակավորում), պահպանումը, բացթողումը և հարակից հսկողությունը: Հարակից հսկողությունն արտադրական գործընթացների նկատմամբ արտադրողի նշանակված պատասխանատու անձանց կողմից իրականացվող հսկողությունն է՝ ուղղված դեղերի արտադրության գործընթացներում պատշաճ արտադրական գործունեության կանոնների պահպանմանը:

3. Լիցենզիան տրվում է արտադրական գործընթացների առնվազն մեկի իրականացման համար՝ բացառությամբ առանձնացված էլանյութերի ձեռքբերման, պահպանման և որակի հսկման գործընթացների:

4. Հայաստանի Հանրապետությունում դեղերի արտադրություն իրականացնելու համար լիցենզիան տալիս (մերժում) է, լիցենզիայի գործողությունը կասեցնում կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում դադարեցնում է Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական լիազոր մարմինը՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ լիազոր մարմին):

5. Դեղերի արտադրության լիցենզիաները տրվում են անժամկետ՝ օրենքով և սույն կարգով նախատեսված բոլոր փաստաթղթերը ներկայացվելուց հետո՝ 23 աշխատանքային օրվա ընթացքում:

(5-րդ կետը փոփ. 01.08.13 N 956-Ն, խմբ. 30.06.16 N 669-Ն)

6. Դեղերի արտադրության լիցենզիաները տրվում են դեղերի արտադրության լիցենզիա ստանալու համար փորձաքննություն իրականացնելու լիցենզիա ունեցող անձի (այսուհետ՝ փորձաքննություն իրականացնող կազմակերպություն) կողմից տրված դրական փորձագիտական եզրակացության հիման վրա:

7. Լիցենզիա տալու համար գանձվում է պետական տուրք «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով: Ընդ որում՝

1) լիցենզավորող մարմինը լիցենզիայի կամ դրա կրկնօրինակի տրման, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայի վերաձևակերպման, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու մասին որոշման ընդունումից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով դրա մասին տեղեկացնում է հայտատուին: Տեղեկացմամբ հայտատուն պետք է նախազգուշացվի սույն կետի 4-րդ ենթակետով նախատեսված հետևանքների մասին:

2) հայտատուն սույն կետի 1-ին ենթակետով սահմանված համապատասխան գործողության համար օրենքով սահմանված պետական տուրքը պարտավոր է վճարել ոչ ուշ, քան լիցենզիայի կամ դրա կրկնօրինակի տրման, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայի վերաձևակերպման, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու հայտը բավարարելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

3) հայտատուն լիցենզավորող մարմին պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ կարող է չներկայացնել: Հայտատուի կողմից պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ չներկայացվելու դեպքում լիցենզավորող մարմինը լիցենզիայի կամ դրա կրկնօրինակի տրման, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայի վերաձևակերպման, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու հայտը բավարարելու մասին որոշումն ընդունելուց հետո գանձապետական առցանց կառավարման համակարգի կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով հավաստիանում է պետական տուրքի վճարման մասին և հայտատուին պատշաճ ձևով հանձնում կամ ուղարկում է լիցենզիան, լիցենզիայի կրկնօրինակը, ժամկետը երկարաձգված լիցենզիան, վերաձևակերպված լիցենզիան, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու լիցենզիան, ինչպես նաև դրանց մասին համապատասխան որոշումները:

4) սույն կետի 2-րդ ենթակետով նախատեսված ժամկետում հայտատուի կողմից պետական տուրքը չվճարվելու դեպքում համապատասխան հայտը մերժվում է՝ պետական տուրքը չվճարելու հիմքով: Հայտը մերժելուց հետո լիցենզավորող մարմին որոշումը չեղյալ է ճանաչվում:

(7-րդ կետը խմբ. 01.08.13 N 956-Ն)

8. Սույն կարգի համաձայն տրված լիցենզիաները գործում են դեղերի արտադրության կազմակերպման և իրականացման կանոնակարգին համապատասխան՝ լիցենզիայում նշված վայրում:

9. Դեղերի արտադրության լիցենզիա ստացած անձինք ոչ ուշ, քան յուրաքանչյուր կիսամյակին հաջորդող ամսվա տասներորդ աշխատանքային օրը լիազոր մարմին են ներկայացնում հաշվետվություն արտադրվող դեղերի մասին՝ համաձայն սույն կարգի N 4 ձևի:

(9-րդ կետը խմբ. 01.08.13 N 956-Ն)

10. Լիցենզիայի վերաձևակերպումը, գործողության կասեցումը և դադարեցումը կատարվում են օրենքով սահմանված կարգով:

**II. ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿՈՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՅ ԵՎ ԱՆՀԱՏ
ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

11. Հայտատուն դեղերի արտադրության լիցենզավորման համար օրենքի համաձայն ներկայացնում է՝

1) լիցենզիա ստանալու մասին հայտը՝ համաձայն N 1 ձևի:

2) դեղերի արտադրության կանոնակարգում պարտադիր ներկայացվող տեղեկությունների ցանկը՝ երկու օրինակից՝ համաձայն սույն կարգի N 3 ձևի:

3) (Ենթակետն ուժը կորցրել է 01.08.13 N 956-Ն)

4) փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրված դրական փորձագիտական եզրակացություն՝ հայտավորված գործունեության համար նախատեսված ապրանքների, առարկաների, սարքավորումների վերաբերյալ:

5) լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականի և իրավասու մարմնի կողմից հայտատուի անվամբ տրված գործունեության համար նախատեսված տարածքի հատակագծի պատճենները:

6) (Ենթակետն ուժը կորցրել է 01.08.13 N 956-Ն)

7) (Ենթակետն ուժը կորցրել է 01.08.13 N 956-Ն)

8) տարեկան պետական տուրքի վճարման անդորրագիրը:

(11-րդ կետը խմբ., փոփ. 01.08.13 N 956-Ն, խմբ. 02.02.17 N 94-Ն)

12. Լիցենզիա ստանալու հայտում կամ կից փաստաթղթերում ոչ էական թերությունների (վրիպակների, ոչ իրավաբանական անճշտությունների, թվաբանական սխալների և նման այլ բացթողումների) առկայության, ինչպես նաև փաստաթղթերը թերի լինելու դեպքում լիցենզավորող մարմինը դրանք հայտնաբերելու պահից 2 աշխատանքային օրվա ընթացքում առաջարկում է հայտատուին 5 աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թերությունները:

(12-րդ կետը խմբ. 01.08.13 N 956-Ն)

13. *(կետն ուժը կորցրել է 01.08.13 N 956-Ն)*

III. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

14. Դեղերի արտադրության իրականացման համար լիցենզիա ստացած իրավաբանական անձը դեղերի արտադրության իրականացման լիցենզիայի պատճենները փակցնում է իր գտնվելու և գործունեության իրականացման վայրերի տեսանելի հատվածում, իսկ անհատ ձեռնարկատերը՝ իր գործունեության իրականացման վայրի տեսանելի հատվածում:

15. Հայաստանի Հանրապետությունում դեղերի արտադրության լիցենզիա ունեցող անձինք արտադրության մեջ օգտագործում են միայն պատշաճ արտադրական կանոններին համապատասխան արտադրված ակտիվ դեղագործական բաղադրամասեր:

16. Դեղերի արտադրության ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեղերի որակին չհամապատասխանող արտադրանքը որակի անհամապատասխանության հայտնաբերումից հետո ենթակա է հետ հավաքման 15 օրվա ընթացքում և ոչնչացման լիազոր մարմնի հաստատած կարգին համապատասխան:

17. Արտադրողի կողմից դեղերի արտադրության յուրաքանչյուր սերիա ենթակա է լաբորատոր և փաստաթղթային փորձաքննության, որի իրականացման կարգը, ժամկետը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

17.1. Լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությունն սկսելուց առնվազն հինգ աշխատանքային օր առաջ լիազոր մարմին է ներկայացնում համապատասխան որակավորում ունեցող անձի մասնագիտական կրթության փաստը հավաստող վկայականը և վերջին հինգ տարվա ընթացքում վերապատրաստման վկայականը: Դեղերի արտադրության լիցենզիա ստանալուց հետո որակավորված անձի փոփոխության դեպքում լիցենզավորված անձը սույն կետով նախատեսված փաստաթղթերը լիազոր մարմին է ներկայացնում փոփոխություններից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում: (Առձեռն փաստաթղթեր ներկայացնելիս պետք է ներկայացվեն դրանց բնօրինակները, իսկ պատճենահանումն անվճար իրականացնում է լիազոր մարմինը:)

(17.1-ին կետը լրաց. 01.08.13 N 956-Ն, խմբ. 30.06.16 N 669-Ն, 08.02.18 N 105-Ն)

IV. ԴԵՂԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ

18. Սույն կարգի 11-րդ կետի 2-րդ ենթակետում նշված պահանջը չի սահմանափակում հայտատուի կողմից դեղերի արտադրության գործընթացի մասին այլ տեղեկություններ ներկայացնելը: Դեղերի արտադրության լիցենզիայի հայտի բավարարման դեպքում լիցենզիայի հետ միաժամանակ լիցենզավորված անձին տրամադրվում է դեղերի արտադրության կանոնակարգի՝ լիազոր մարմնի ղեկավարի հրամանով հաստատված մեկ օրինակ:

19. Լիցենզավորված անձի կողմից դեղերի արտադրության կանոնակարգում կատարվող փոփոխությունները կամ լրացումները կամ դեղերի արտադրության նոր կանոնակարգերը լիազոր մարմնի կողմից հաստատվելու նպատակով նախապես ներկայացվում են լիազոր մարմին երկու օրինակից:

20. Յուրաքանչյուր հաջորդ դեղաձևի արտադրության դեպքում արտադրության կանոնակարգում փոփոխությունների կամ լրացումների նպատակով հայտատուն լիազոր մարմին է ներկայացնում նաև փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրված դրական եզրակացությունը՝ ըստ նոր դեղաձևերի՝ հայտավորված գործունեության համար նախատեսված ապրանքների, առարկաների, սարքավորումների վերաբերյալ:

21. Լիազոր մարմնի ղեկավարը 15-օրյա ժամկետում հրաման է ընդունում դեղերի արտադրության կանոնակարգում առաջարկվող փոփոխությունները կամ լրացումները կամ նոր կանոնակարգը հաստատելու կամ դրանք մերժելու մասին: Հրամանի պատճենը երեք աշխատանքային օրվա ընթացքում տրամադրվում (փոստով առաքվում) է լիցենզավորված անձին:

22. Դեղերի արտադրության կանոնակարգում կատարվող փոփոխությունները կամ լրացումները կամ դեղերի արտադրության նոր կանոնակարգերը՝ լիցենզավորող մարմնի կողմից մերժվելու դեպքում, լիցենզավորված անձը կարող է դիմել դեղերի արտադրության կանոնակարգում փոփոխություններ կամ լրացումներ կամ նոր կանոնակարգ ընդունելու համար սույն կարգով սահմանված ընդհանուր կարգով:

23. Դեղերի արտադրության կազմակերպման և իրականացման կանոնակարգի փոփոխությունները կամ լրացումները կամ նոր կանոնակարգերը լիցենզավորող մարմինը մերժում է, եթե դրանք

- 1) հակասում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը.
- 2) չեն համապատասխանում սույն կարգի N 3 ձևով նախատեսված դեղերի արտադրության կանոնակարգում պարտադիր ներկայացվող տեղեկությունների ցանկին.
- 3) նոր դեղաձևի արտադրության դեպքում՝ լիազոր մարմին չի ներկայացվել փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրված դրական եզրակացություն՝ հայտավորված գործունեության համար նախատեսված ապրանքների, առարկաների, սարքավորումների վերաբերյալ:

24. Լիցենզիայի վերաձևակերպումը, գործողության կասեցումը և դադարեցումը կատարվում են օրենքով սահմանված կարգով:

V. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՀԱՅՏԻ ՄԵՐԺՈՒՄԸ

25. Լիցենզիա ստանալու մասին հայտը մերժվում է հետևյալ պայմաններից որևէ մեկի առկայության դեպքում՝

- 1) ներկայացված հայտը և կից փաստաթղթերը թերի են և չեն լրացվել սույն կարգի 12-րդ կետով նախատեսված

ժամկետում, կամ դրանցում առկա են ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված տեղեկություններ կամ,

2) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքի, այլ իրավական ակտերի և սույն կարգի պահանջներին կամ,

3) իրավաբանական անձն օրենքի կամ իր կանոնադրության համաձայն իրավունք չունի զբաղվելու հայցվող լիցենզավորման ենթակա գործունեությամբ կամ,

4) լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված տարածքը սեփականության, վարձակալության, ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով չի պատկանում հայտատուին կամ,

5) դեղերի արտադրության կանոնակարգը չի համապատասխանում սույն կարգի N 3 ձևով սահմանված պահանջներին կամ,

6) (ենթակետն ուժը կորցրել է 01.08.13 N 956-Ն)

(25-րդ կետը փոփ. 01.08.13 N 956-Ն)

26. Լիցենզիա ստանալու հայտը մերժվելու մասին որոշումն ընդունվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքվում է հայտատուին:

Ձև N 1

ՀՀ առողջապահության նախարար
_____ -ին

(անունը, ազգանունը)

Հ Ա Յ Տ

Դ Ե Դ Ե Դ Ի Ա Ր Տ Ա Դ Դ Ո Ի Թ Յ Ա Ն Ի Բ Ա Կ Ա Ն Ա Ց Մ Ա Ն Լ Ի Ց Ե Ն Ձ Ի Ա Ս Տ Ա Ն Ա Լ Ո Ի Մ Ա Ս Ի Ն

1. Իրավաբանական անձի անվանումը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը

2. Գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն և ինտերնետային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում)

3. Իրավաբանական անձի պետական գրանցման համարը (անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման համարը) կամ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) □□□□□□□□□□

4. Վճարված է պետական տուրք (նշում կատարվում է պետական տուրքը նախապես վճարված լինելու դեպքում)՝
 այո

5. Կից ներկայացնում եմ (պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկ)՝

դեղերի արտադրության կանոնակարգում պարտադիր ներկայացվող տեղեկությունների ցանկը (1 օրինակից),

փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրված դրական փորձագիտական եզրակացությունը՝ հայտավորված գործունեության համար նախատեսված ապրանքների, առարկաների, սարքավորումների, տարածքների և տեխնիկատեխնոլոգիական հագեցվածության վերաբերյալ:

Լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականի և իրավասու մարմնի կողմից հայտատուի անվամբ տրված գործունեության համար նախատեսված տարածքի հատակագծի պատճենները:

Ներկայացված տեղեկությունների իսկությունը հաստատում եմ՝

(կազմակերպության տնօրենի (անհատ ձեռնարկատիրոջ) ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ 20 թ.

(ձևը խմբ. 01.08.13 N 956-Ն, 02.02.17 N 94-Ն, 15.07.21 N 1138-Ն)

Ձև N 2

(ձևն ուժը կորցրել է 01.08.13 N 956-Ն)

Ց Ա Ն Կ

ԴԵՂԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ՊԱՐՏԱԴՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Փորձագիտական եզրակացության համարը, օրը, ամիսը, տարեթիվը

- 1. Հայտատուի անունը, ազգանունը կամ անվանումը _____
- 2. Կազմակերպական-իրավական ձևը _____
- 3. Գտնվելու (բնակվելու) և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարները, էլեկտրոնային փոստի և ինտերնետային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում) _____

1.	Արտադրության տեսակը`
	<input type="checkbox"/> Սարդու օգտագործման դեղերի արտադրություն <input type="checkbox"/> Անասնաբուժական դեղերի արտադրություն <input type="checkbox"/> Հետազոտական նպատակներով դեղերի արտադրություն Արտադրական գործընթացների տեսակները
1.	Ստերիլ արտադրանք
	<i>1) Ասեպտիկ պայմաններում արտադրված դեղաձևեր</i> ա. Մեծ ծավալով հեղուկներ բ. Լիոֆիլիզատներ գ. Փափուկ դեղաձևեր դ. Փոքր ծավալով հեղուկներ ե. Կարծր դեղաձևեր և իմպլանտներ զ. Ասեպտիկ պայմաններում արտադրված այլ արտադրանք
	<i>2) Վերջնական ստերիլիզացման ենթակա դեղաձևեր</i> ա. Մեծ ծավալով հեղուկներ բ. Փափուկ դեղաձևեր գ. Փոքր ծավալով հեղուկներ դ. Կարծր դեղաձևեր և իմպլանտներ ե. Վերջնական ստերիլիզացման ենթակա այլ արտադրանք
	<i>3) Մերիայի բացթողման հավաստագրում</i>
2.	Ոչ ստերիլ արտադրանք

	<p>1) Ոչ ստերիլ դեղաձևեր</p> <p>ա. Կարծր դեղապատիճներ</p> <p>բ. Փափուկ դեղապատիճներ</p> <p>գ. Ծամելու դեղաձևեր</p> <p>դ. Ներծծված մատրիցաներ</p> <p>ե. Հեղուկներ՝ արտաքին օգտագործման համար</p> <p>զ. Հեղուկներ՝ ներքին օգտագործման համար</p> <p>է. Բժշկական գազեր</p> <p>ը. Այլ կարծր դեղաձևեր</p> <p>թ. Ճնշման տակ գտնվող դեղաձևեր</p> <p>ժ. Ռադիոնուկլիդային գեներատորներ</p> <p>ժա. Փափուկ դեղաձևեր</p> <p>ժբ. Մոմիկներ</p> <p>ժգ. Դեղահատեր</p> <p>ժդ. Սպեղանիներ</p> <p>ժե. Ինտրարումինալ դեղաձևեր</p> <p>ժզ. Անասնաբուժական խառնուրդներ</p> <p>ժէ. Ոչ ստերիլ այլ արտադրանք</p>
	<p>2) Մերիայի բացթողման հավաստագրում</p>
<p>3. Կենսաբանական դեղեր</p>	
	<p>1) Կենսաբանական դեղեր</p> <p>ա. Արյան արտադրանքներ</p> <p>բ. Իմունաբանական արտադրանքներ</p> <p>գ. Բջջային թերապիայի արտադրանքներ</p> <p>դ. Գենային թերապիայի արտադրանքներ</p> <p>ե. Կենսատեխնոլոգիական արտադրանքներ</p> <p>զ. Մարդու կամ կենդանիների օրգաններից արտադրանքներ</p> <p>է. Այլ կենսաբանական դեղեր</p>
	<p>2) Մերիայի բացթողման հավաստագրում</p> <p>ա. Արյան արտադրանքներ</p> <p>բ. Իմունաբանական արտադրանքներ</p> <p>գ. Բջջային թերապիայի արտադրանքներ</p> <p>դ. Գենային թերապիայի արտադրանքներ</p> <p>ե. Կենսատեխնոլոգիական արտադրանքներ</p> <p>զ. Մարդու կամ կենդանիների օրգաններից արտադրանքներ</p> <p>է. Այլ կենսաբանական դեղեր</p>
<p>4. Այլ արտադրանքներ կամ արտադրական գործունեություն</p>	
	<p>1) Արտադրություն</p> <p>ա. Բուսական դեղեր</p> <p>բ. Հումեոպատային դեղեր</p> <p>գ. Կենսաբանական ակտիվ էլանյութեր</p> <p>դ. Այլ</p>
	<p>2) Ակտիվ դեղանյութերի (օժանդակ նյութերի) վերջնական արտադրանքի մանրէազերծում</p> <p>ա. Ֆիլտրում</p> <p>բ. Չոր տաքացում</p> <p>գ. Խոնավ տաքացում</p> <p>դ. Քիմիական</p> <p>ե. Գամմա ճառագայթում</p> <p>զ. Էլեկտրոնային ճառագայթ</p> <p>է. Այլ</p>

5.	Փաթեթավորում
	<p><i>1) Առաջնային փաթեթավորում</i> ա. Կարծր դեղապատիճներ բ. Փափուկ դեղապատիճներ գ. Ծամելու դեղաձևեր դ. Ներծոված մատրիցաներ ե. Հեղուկներ՝ արտաքին օգտագործման համար զ. Հեղուկներ՝ ներքին օգտագործման համար է. Բժշկական գազեր ը. Այլ կարծր դեղաձևեր թ. Ճնշման տակ գտնվող դեղեր ժ. Ռադիոնուկլիդային գեներատորներ ժա. Փափուկ դեղաձևեր ժբ. Մոմիկներ ժգ. Դեղահատեր ժդ. Սպեղանիներ ժե. Ինտրարումինալ դեղաձևեր ժզ. Անասնաբուժական խառնուրդներ ժէ. Ոչ ստերիլ այլ արտադրանք</p>
	<p><i>2) Երկրորդային փաթեթավորում</i></p>
6.	Որակի հսկում
	<p><i>1) Մանրէաբանական, ստերիլությունը</i></p>
	<p><i>2) Մանրէաբանական, ոչ ստերիլությունը</i></p>
	<p><i>3) Քիմիական/Ֆիզիկական</i></p>
	<p><i>4) Կենսաբանական</i></p>
7.	Լրացուցիչ նշումներ

4. Առանձնացված արտադրության պայմաններ պահանջող արտադրանք՝ պենիցիլիններ, ցեֆալոսպորիններ, սուլֆոնամիդներ, ցիտոտոքսիկներ, հորմոնալ ակտիվությամբ նյութեր կամ այլ պոտենցիալ վտանգավոր ակտիվ բաղադրիչներ պարունակող դեղերի, ռադիոդեղագործական արտադրանքի (Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 25-ի N 1603-Ն որոշում) արտադրության դեպքում անհրաժեշտ է դեղերի արտադրության կանոնակարգի բոլոր կետերում (բացի սույն ցանկի 5-րդ կետի 2-րդ ենթակետից և 6-րդ կետից) և հատուկ նշումներում կատարել հավելյալ գրառումներ՝ նշելով համապատասխան խմբի անվանումը: Որակավորված անձը (անձինք) _____

(անունը, ազգանունը, որակավորումը)

Դեղերի արտադրության իրականացման համար նախատեսված տեխնիկատեխնոլոգիական հագեցվածության, տարածքի և արտադրամասերի մասին տեղեկություններ (կցելով տարածքի հաստակագիծը):
 Հաստատում եմ ներկայացված տեղեկությունների իսկությունը

(հայտատու իրավաբանական անձի անվանումը, տնօրենի անունը, ազգանունը, ստորագրությունը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, ստորագրությունը)

(օրը, ամիսը, տարեթիվը)
(ձևը խմբ. 01.08.13 N 956-Ն)

Ձև N 4

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԱՐՏԱԴՐՎՈՂ ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ

Իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը

NN ը/կ	Արտադրվող դեղի անվանումը	Դեղաձևը	Դեղաչափը	Սերիան	Քանակը

_____ օրը, ամիսը, տարեթիվը

_____ (իրավաբանական անձի տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ ստորագրությունը)

Ձև N 5

(ձևն ուժը կորցրել է 01.08.13 N 956-Ն)

(հավելվածը փոփ., խմբ., լրաց. 01.08.13 N 956-Ն, խմբ. 30.06.16 N 669-Ն, 02.02.17 N 94-Ն, 08.02.18 N 105-Ն, 15.07.21 N 1138-Ն)

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2002 թվականի
հունիսի 29-ի N 867 որոշման

Ձև N 1



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ Ա-ԴԱ-000000

Տրված՝ _____ 20 թվականին
Գործունեության տեսակը _____

Անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և բնակության վայրը _____

Գործունեության իրականացման վայրը _____

Գործողության ժամկետը՝ անժամկետ:

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարության
աշխատակազմի լիցենզավորման գործակալության պետ

(ստորագրությունը)

Կ. Տ.

Ձև N 2



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ Կ-ԴԱ-000000

Տրված՝ _____ 20 թվականին

Գործունեության տեսակը _____

Իրավաբանական անձի անվանումը և գտնվելու վայրը _____

Գործունեության իրականացման վայրը _____

Գործողության ժամկետը՝ անժամկետ:

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարության
աշխատակազմի լիցենզավորման գործակալության պետ

(ստորագրությունը)

Կ. Տ.

Հավելված N 3

**ՀՀ կառավարության 2002 թվականի
հունիսի 29-ի N 867 որոշման**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից լիցենզավորման ենթակա դեղատնային գործունեության իրականացման (այսուհետ՝ դեղատնային գործունեություն) լիցենզավորման կարգը՝ համաձայն «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) պահանջների:
 2. Հայաստանի Հանրապետությունում դեղատնային գործունեություն իրականացնելու համար լիցենզիան տալիս (մերժում) է, լիցենզիայի գործողությունը կասեցնում կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում դադարեցնում է Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական լիազոր մարմինը՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ լիազոր մարմին):
 3. Դեղատնային գործունեության լիցենզիաները տրվում են անժամկետ՝ օրենքով և սույն կարգով նախատեսված բոլոր փաստաթղթերը ներկայացվելուց հետո 23 աշխատանքային օրվա ընթացքում:
- (3-րդ կետը փոփ. 01.08.13 N 956-Ն, խմբ. 30.06.16 N 669-Ն)**
4. Լիցենզիա տալու համար գանձվում է պետական տուրք «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով: Ընդ որում՝
 - 1) լիցենզավորող մարմինը լիցենզիայի կամ դրա կրկնօրինակի տրման, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայի վերաձևակերպման, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու մասին որոշման ընդունումից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով դրա մասին տեղեկացնում է հայտատուին: Տեղեկացմամբ հայտատուն պետք է նախազգուշացվի սույն կետի 4-րդ ենթակետով նախատեսված հետևանքների մասին.
 - 2) հայտատուն սույն կետի 1-ին ենթակետով սահմանված համապատասխան գործողության համար օրենքով սահմանված պետական տուրքը պարտավոր է վճարել ոչ ուշ, քան լիցենզիայի կամ դրա կրկնօրինակի տրման, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայի վերաձևակերպման, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու հայտը բավարարելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում.
 - 3) հայտատուն լիցենզավորող մարմին պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ կարող է չներկայացնել: Հայտատուի կողմից պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ չներկայացվելու դեպքում լիցենզավորող մարմինը լիցենզիայի կամ դրա կրկնօրինակի տրման, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայի վերաձևակերպման, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու հայտը բավարարելու մասին որոշումն ընդունելուց հետո գանձապետական առցանց կառավարման համակարգի կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով հավաստիանում է պետական տուրքի վճարման մասին և հայտատուին պատշաճ ձևով հանձնում կամ ուղարկում է լիցենզիան, լիցենզիայի կրկնօրինակը, ժամկետը երկարաձգված լիցենզիան, վերաձևակերպված լիցենզիան, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու լիցենզիան, ինչպես նաև դրանց մասին համապատասխան որոշումները.
 - 4) սույն կետի 2-րդ ենթակետով նախատեսված ժամկետում հայտատուի կողմից պետական տուրքը չվճարվելու դեպքում համապատասխան հայտը մերժվում է՝ պետական տուրքը չվճարելու հիմքով: Հայտը մերժելուց հետո լիցենզավորող մարմնի որոշումը չեղյալ է ճանաչվում:
- (4-րդ կետը խմբ. 01.08.13 N 956-Ն)**
- 4.1. Լիցենզավորված անձը լիցենզիա տալու մասին որոշումն ստանալուց հետո դեղատնային գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրի համար հինգ աշխատանքային օրվա ընթացքում պետք է էլեկտրոնային առողջապահության համակարգին միացման և սպասարկման պայմանագիր կնքի էլեկտրոնային առողջապահության համակարգն սպասարկող օպերատորի հետ:
- (4.1-ին կետը լրաց. 24.08.17 N 1033-Ն)**
5. Դեղատնային գործունեության իրականացման դեպքում աշխատանքն իրականացնող համապատասխան մասնագետների գործունեության համար պահանջվում է մասնագիտական որակավորման ստուգում, որն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:
 6. Իրենց գործունեության իրականացման ընթացքում թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պարունակող դեղերի իրացում և (կամ) բացթողում իրականացնող անհատ ձեռնարկատերերին կամ իրավաբանական անձանց դեղատնային գործունեության իրականացման լիցենզիա տրամադրելիս լիցենզիայի «Գործունեության տեսակը» ստորում, գործունեության տեսակը նշելուց բացի, կատարվում է նաև հետևյալ նշումը՝

«(ներառյալ թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պարունակող դեղերի իրացում և (կամ) բացթողում):»:
- (6-րդ կետը խմբ. 01.08.13 N 956-Ն)**
7. Սույն կարգի համաձայն տրված լիցենզիաները գործում են միայն լիցենզիայում նշված վայրում:
 8. Լիցենզիայի վերաձևակերպումը կամ գործողության կասեցումը կամ դադարեցումը կատարվում են օրենքով սահմանված կարգով:

II. ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

9. Հայտատուն դեղատնային գործունեության լիցենզավորման համար օրենքի համաձայն ներկայացնում է՝

1) լիցենզիա ստանալու մասին հայտ (ձևը կցվում է)։

2) լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականի և իրավասու մարմնի կողմից հայտատուի անվամբ տրված գործունեության համար նախատեսված տարածքի հատակագծի պատճենները։

3) *(Ենթակետն ուժը կորցրել է 02.02.17 N 94-Ն)*

(9-րդ կետը խմբ. 01.08.13 N 956-Ն, խմբ., փոփ. 02.02.17 N 94-Ն)

9.1. Այլ վայրում ևս դեղատնային գործունեության իրականացման կամ դեղատնային գործունեության իրականացման վայրի փոփոխման դեպքում լիցենզավորված անձը լիազոր մարմին է ներկայացնում՝

1) այլ վայրում ևս դեղատնային գործունեության իրականացման լիցենզիա ստանալու կամ դեղատնային գործունեության իրականացման վայրի փոփոխման մասին հայտ՝ համաձայն NN 6 և 7 ձևերի։

2) այլ վայրում ևս դեղատնային գործունեության իրականացման կամ դեղատնային գործունեության իրականացման վայրի փոփոխման դեպքում դեղատնային գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ լիցենզավորված անձի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականի և հայտատուի անվամբ (անվանմամբ) տրված՝ գործունեության համար նախատեսված տարածքի հատակագծի պատճենները։

3) լիցենզիայի բնօրինակը՝ գործունեության իրականացման վայրի փոփոխման դեպքում։

(9.1-ին կետը լրաց. 02.02.17 N 94-Ն)

10. Դեղատնային գործունեության լիցենզիա ստանալու, այլ վայրում ևս դեղատնային գործունեության իրականացման լիցենզիա ստանալու կամ դեղատնային գործունեության իրականացման վայրի փոփոխման մասին հայտերում կամ կից փաստաթղթերում ոչ էական թերությունների (վրիպակներ, ոչ իրավաբանական անճշտություններ, թվաբանական սխալներ և նման այլ բացթողումներ) առկայության, ինչպես նաև փաստաթղթերը թերի լինելու դեպքում լիցենզավորող մարմինը դրանք հայտնաբերելու պահից 2 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային նամակագրության կամ հեռախոսային կապի միջոցով՝ հայտատուի ընտրած եղանակով հայտատուին առաջարկում է 5 աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թերությունները և փաստաթղթերը ներկայացնել լիազոր մարմին։

(10-րդ կետը խմբ. 01.08.13 N 956-Ն, 02.02.17 N 94-Ն)

11. *(կետն ուժը կորցրել է 19.09.19 N 1241-Ն)*

III. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

12. Դեղատնային գործունեության լիցենզիա ստացած իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը դեղատանը (դեղեր պատրաստող և դեղեր չպատրաստող) դեղերի ընդունում, պահպանում, իրացում և բացթողում կարող է իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված և պետական հավատարմագրում ունեցող ուսումնական հաստատություն ավարտած, օրենքով սահմանված կարգով որակավորված և վերջին հինգ տարվա ընթացքում վերապատրաստում անցած դեղագետների կամ դեղագործների միջոցով: Ընդ որում, դեղատնային գործունեության համար լիցենզավորված անհատ ձեռնարկատերը, եթե նա համապատասխանում է սույն կետով դեղագետին կամ դեղագործին ներկայացվող որակավորման պահանջներին, դեղատանը (դեղեր պատրաստող և դեղեր չպատրաստող) դեղերի ընդունում, պահպանում, իրացում և բացթողում կարող է իրականացնել անձամբ։

(12-րդ կետը խմբ. 01.08.13 N 956-Ն, 30.06.16 N 669-Ն, 08.02.18 N 105-Ն, փոփ. 19.09.19 N 1241-Ն)

13. Դեղատնային գործունեությունը դեղատան (դեղեր պատրաստող) միջոցով իրականացնող իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը դեղերի պատրաստում կարող է իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված և պետական հավատարմագրում ունեցող ուսումնական հաստատություն ավարտած, օրենքով սահմանված կարգով որակավորված և վերջին հինգ տարվա ընթացքում վերապատրաստում անցած դեղագետների միջոցով: Ընդ որում, դեղատնային գործունեությունը դեղատան (դեղեր պատրաստող) միջոցով իրականացնող իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը պետք է ունենա առնվազն մեկ դեղագետ՝ բացառությամբ այն դեպքի, երբ անհատ ձեռնարկատերը համապատասխանում է սույն կետով դեղագետին ներկայացվող պահանջներին։

(13-րդ կետը խմբ. 01.08.13 N 956-Ն, 30.06.16 N 669-Ն, 08.02.18 N 105-Ն, լրաց. 19.09.19 N 1241-Ն)

14. Մեկից ավելի վայրերում դեղատնային գործունեությամբ զբաղվելու դեպքում՝

1) յուրաքանչյուր դեղատանը (դեղեր պատրաստող) գործունեություն իրականացնող դեղագետը կամ դեղագործը, իսկ մեկից ավելի լինելու դեպքում՝ դեղագետներից կամ դեղագործներից մեկն իրավաբանական անձի գործադիր մարմնի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից նշանակվում է որպես տվյալ դեղատան (դեղեր պատրաստող) պատասխանատու անձ (պաշտոնատար անձ)։

2) յուրաքանչյուր դեղատանը (դեղեր չպատրաստող) գործունեություն իրականացնող դեղագետը կամ դեղագործը,

իսկ մեկից ավելի լինելու դեպքում՝ դեղագետներից կամ դեղագործներից մեկն իրավաբանական անձի գործադիր մարմնի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից նշանակվում է որպես սովյալ դեղատան (դեղեր չպատրաստող) պատասխանատու անձ (պաշտոնատար անձ):

(14-րդ կետը լրաց. 01.08.13 N 956-Ն, խմբ. 02.02.17 N 94-Ն, լրաց., փոփ. 19.09.19 N 1241-Ն)

15. Սույն կարգի 14-րդ կետով նախատեսված անձը պատասխանատու է համապատասխան դեղատանը (դեղեր պատրաստող և դեղեր չպատրաստող) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ու գերատեսչական ակտերով դեղատնային գործունեության իրականացման համար սահմանված պարտադիր պայմանների ու պահանջների պահպանման համար:

(15-րդ կետը փոփ. 19.09.19 N 1241-Ն)

16. Կառուցվածքին և գույքային հագեցվածությանը ներկայացվող պահանջներն են՝

1) դեղատան (դեղեր պատրաստող) համար՝

ա. առևտրի սրահ (ներառյալ սպասասրահը)՝ 12 քառ. մետր մակերեսով (բացառությամբ սույն կարգի 26-րդ կետով սահմանված դեպքի), ցուցադրման սեղաններ, ցուցապահարաններ, փակ պահարաններ, վաճառասեղան, սառնարան, ջերմաչափ, դեղատոմսերի ընդունման և պատրաստված դեղերի բացթողման համար նախատեսված հատված,

բ. ասիստենտական սենյակ, որտեղ պատրաստում են դեղատոմսով պատրաստվող դեղերը, և տեղադրված են պահարաններ՝ շշերի ու դեղափոշիների պահպանման համար, ասիստենտական սեղան, հեղուկների չափիչ ամանեղեն, լաբորատոր ամանեղեն, հավանգ, կշեռք և կշռաքարեր՝ դեղանյութի կշռման համար, սառնարան, սենյակային ջերմաչափ,

գ. փայթեթավորման սենյակ՝ լվացարան, ամանեղենի չորացման, մանրէազերծման էլեկտրական պահարան, սեղան, աթոռ, ջրի թորման սարք,

դ. վտանգավոր թափոնների արկղի պահպանման սենյակ կամ վտանգավոր թափոնների արկղի պահպանման պահարան (լիցենզիա ստանալուց հետո),

ե. անձնական ու աշխատանքային հագուստի՝ միմյանցից մեկուսացման հնարավորությամբ պահարան,

զ. սանհանգույց՝ լվացարանով (լվացարանը կարող է տեղակայված լինել կամ սանհանգույցի ներսում կամ սանհանգույցի նախամուտքում)։

2) դեղատան (դեղեր չպատրաստող) համար՝

ա. առևտրի սրահ (ներառյալ սպասասրահը)՝ նվազագույնը 12 քառ. մետր մակերեսով, ցուցադրման սեղաններ, ցուցապահարաններ, փակ պահարաններ, վաճառասեղան, սառնարան, ջերմաչափ,

բ. վտանգավոր թափոնների արկղի պահպանման սենյակ կամ վտանգավոր թափոնների արկղի պահպանման պահարան (լիցենզիա ստանալուց հետո),

գ. անձնական ու աշխատանքային հագուստի՝ միմյանցից մեկուսացման հնարավորությամբ պահարան,

դ. սանհանգույց՝ լվացարանով (լվացարանը կարող է տեղակայված լինել կամ սանհանգույցի ներսում կամ սանհանգույցի նախամուտքում)։

(16-րդ կետը խմբ. 02.02.17 N 94-Ն, 08.02.18 N 105-Ն, լրաց., փոփ. 19.09.19 N 1241-Ն)

17. (կետն ուժը կորցրել է 02.02.17 N 94-Ն)

18. Դեղատանը (դեղեր պատրաստող և դեղեր չպատրաստող) տեխնիկատեխնոլոգիական միջոցներով պետք է ապահովվի դեղերի պահպանման համար անհրաժեշտ ջերմային ռեժիմ:

(18-րդ կետը փոփ. 19.09.19 N 1241-Ն)

19. Սյն դեղատները (դեղեր պատրաստող և դեղեր չպատրաստող), որոնք իրացնում և (կամ) բաց են թողնում թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղեր, պետք է ունենան թմրամիջոցների ու հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի պահպանման համար պահեստ (բունկեր) կամ հատակին ամրացված չիրկիզվող պահարան: Պահեստը սենք է: Պահեստը կամ սենյակը, որտեղ գտնվում է հատակին ամրացված չիրկիզվող պահարանը, պետք է ունենա խոնավաչափ և ապահովված լինի ազդանշանային համակարգով՝ ձայնային կամ լուսային ազդանշանը պահպանության դիտակետին միացնելով կամ շենքի արտաքին մասին ամրացնելով: Ազդանշանային սարքավորումների էլեկտրասնուցման համակարգը պետք է ունենա պահեստային էլեկտրասնուցման աղբյուր:

(19-րդ կետը խմբ. 02.02.17 N 94-Ն, փոփ. 19.09.19 N 1241-Ն)

20. Դեղատան (դեղեր պատրաստող) պահեստը և դեղատան (դեղեր չպատրաստող) պահեստը (առկայության դեպքում) դեղերի պահպանման համար անհրաժեշտ ջերմային ռեժիմ ապահովելու նպատակով պետք է կահավորված լինեն փակ պահարաններով, վիրակապական և ռետինե ապրանքների համար պետք է ունենա առանձին պահարաններ ու խոնավաչափ:

(20-րդ կետը լրաց., փոփ. 19.09.19 N 1241-Ն)

21. Դեղատան (դեղեր պատրաստող) պահեստում և դեղատան (դեղեր չպատրաստող) պահեստում (առկայության դեպքում) տեխնիկատեխնոլոգիական միջոցներով պետք է ապահովվի դեղերի պահպանման համար անհրաժեշտ ջերմային ռեժիմ:

(21-րդ կետը լրաց., փոփ. 19.09.19 N 1241-Ն)

22. (կետն ուժը կորցրել է 02.02.17 N 94-Ն)

23. Դեղատանը (դեղեր պատրաստող և դեղեր չպատրաստող) դեղագետների ու դեղագործների աշխատանքները կազմակերպվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքին համապատասխան:

(23-րդ կետը փոփ. 19.09.19 N 1241-Ն)

24. *(կետն ուժը կորցրել է 02.02.17 N 94-Ն)*

25. *(կետն ուժը կորցրել է 01.08.13 N 956-Ն)*

26. Հասարակական շենքերի (առևտրի կենտրոններ, աուպերմարկետներ և այլն), բժշկական հաստատությունների, վարչական շենքերի, մետրոնների, օդանավակայանների, երկաթուղային և ավտոկայարանների սպասարահներում տեղադրվող դեղատների (դեղեր չպատրաստող) համար առանձին սպասարահ ու սանհանգույց ունենալը պարտադիր չէ, եթե դրանցում կան ընդհանուր օգտագործման սանհանգույց և սպասարահ: Այս դեպքում առևտրի սրահի մակերեսի նվազագույն թույլատրելի չափը սահմանվում է 6 քառ. մետր:

(26-րդ կետը փոփ. 01.08.13 N 956-Ն, խմբ. 02.02.17 N 94-Ն, փոփ. 19.09.19 N 1241-Ն)

27. Սույն կարգով նախատեսված դեղատան (դեղեր պատրաստող և դեղեր չպատրաստող) համար հատկացված տարածքները պետք է տեղակայված լինեն միևնույն շինության կամ շենքի տարածքում և ունենան գործառնական կապ:

(27-րդ կետը փոփ. 19.09.19 N 1241-Ն)

28. Սույն կարգի իմաստով դեղատան (դեղեր պատրաստող և դեղեր չպատրաստող) սենքերն ունեն գործառնական կապ, եթե գտնվում են միևնույն շենքի կամ շինության տարածքում, ունեն մեկ ընդհանուր մուտք:

(28-րդ կետը խմբ. 02.02.17 N 94-Ն, փոփ. 19.09.19 N 1241-Ն)

29. *(կետն ուժը կորցրել է 02.02.17 N 94-Ն)*

30. Դեղատան (դեղեր պատրաստող և դեղեր չպատրաստող) սպառողների համար տեսանելի վայրում պետք է փակցված լինեն տեղեկատու դեղատների (դեղեր պատրաստող) հեռախոսահամարները (հեռախոսահամարները տեղադրված են լիազոր մարմնի պաշտոնական կայքէջում և թարմացվում են կիսամյակային պարբերականությամբ), սպասարկող դեղագետի կամ դեղագործի անունը, ազգանունը (լիցենզիա ստանալուց հետո):

(30-րդ կետը խմբ. 01.08.13 N 956-Ն, 02.02.17 N 94-Ն, լրաց., փոփ. 19.09.19 N 1241-Ն)

31. Դեղատանը (դեղեր պատրաստող և դեղեր չպատրաստող) թղթային կամ էլեկտրոնային տարբերակով պետք է առկա լինեն դեղագրքեր և դեղագիտական-տեղեկատվական ձեռնարկներ, դեղատոմսով և առանց դեղատոմսի բաց թողնվող դեղերի ցանկ (տեղադրված է լիազոր մարմնի պաշտոնական կայքէջում և թարմացվում է կիսամյակային պարբերականությամբ): Դեղատունը (դեղեր պատրաստող և դեղեր չպատրաստող) պետք է ապահովված լինի էլեկտրոնային առողջապահության համակարգին միացված մշտապես գործող ինտերնետ կապուղիով՝ յուրաքանչյուր վայրում առնվազն 1 մբ/վ սիմետրիկ ինտերնետ սնուցմամբ առաջին 5 օգտատիրոջ համար, իսկ 5-ից ավելի օգտատերերի դեպքում՝ յուրաքանչյուր 10 օգտատիրոջ հաշվով լրացուցիչ 2 մբ/վ սիմետրիկ ինտերնետ սնուցմամբ:

(31-րդ կետը խմբ. 01.08.13 N 956-Ն, 02.02.17 N 94-Ն, լրաց. 24.08.17 N 1033-Ն, փոփ. 19.09.19 N 1241-Ն)

32. Տեղեկատու դեղատանը (դեղեր պատրաստող և դեղեր չպատրաստող) պետք է լինեն տվյալ մարզի, իսկ Երևան քաղաքի դեպքում՝ քաղաքի տարածքում գործող նվազագույնը հինգ դեղատան (դեղեր պատրաստող) հեռախոսահամարներ (լիցենզիա ստանալուց հետո):

(32-րդ կետը խմբ. 02.02.17 N 94-Ն, լրաց., փոփ. 19.09.19 N 1241-Ն)

33. Սույն կարգի իմաստով տեղեկատու է համարվում սպառողի կողմից փնտրվող դեղի առկայության մասին տեղեկատվության (ներառյալ՝ տեղեկատվություն այլ դեղատներում (դեղեր պատրաստող և դեղեր չպատրաստող) դրա առկայության, դրանց աշխատանքային ժամերի, կոնտակտային տվյալների վերաբերյալ) ստացման, պահպանման և տրամադրման համար պարբերաբար թարմացվող, ինչպես նաև արագ փնտրելու հնարավորություն ընձեռող տեղեկատվական բազա ունեցող և այդ տեղեկատվությունը տրամադրող դեղատունը (դեղեր պատրաստող և դեղեր չպատրաստող), որն այդ ծառայության համար ունի հատուկ նախատեսված հեռախոսահամար:

(33-րդ կետը փոփ. 19.09.19 N 1241-Ն)

34. Դեղատնից (դեղեր պատրաստող և դեղեր չպատրաստող) դեղերը դեղատոմսով բաց են թողնվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

(34-րդ կետը փոփ. 19.09.19 N 1241-Ն)

35. Դեղատանը (դեղեր պատրաստող և դեղեր չպատրաստող) սույն կարգի 14-րդ կետով նախատեսված պատասխանատու անձի (պաշտոնատար անձ) կողմից պետք է վարվի բժշկական թափոնների հաշվառում՝ լիազոր մարմնի կողմից սահմանված [կարգով](#):

(35-րդ կետը փոփ. 19.09.19 N 1241-Ն)

36. *(կետն ուժը կորցրել է 02.02.17 N 94-Ն)*

37. Դեղատանը (դեղեր պատրաստող և դեղեր չպատրաստող) դեղերը պետք է պահվեն ըստ ֆարմակոլոգիական խմբերի՝ դրանց ուղեկցող փաստաթղթերում սահմանված դեղերի պահպանման համար անհրաժեշտ ջերմային ռեժիմում և համապատասխան լուսավորության ու խոնավության պայմաններում:

(37-րդ կետը փոփ. 19.09.19 N 1241-Ն)

38. Դեղատունը (դեղեր պատրաստող և դեղեր չպատրաստող) արտաքին հատվածից պետք է ձևավորված լինի «Դեղատուն» վերաառությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ստանդարտին համապատասխանող կանաչ խաչի նշանով (լիցենզիա ստանալուց հետո), որը պետք է ուղղահայաց փակցվի դեղատան (դեղեր պատրաստող և դեղեր չպատրաստող) արտաքին պատին, իսկ լուսավորվող խաչի դեպքում՝ պետք է լինի չթարթող և լուսավորվի միայն դեղատան (դեղեր պատրաստող և դեղեր չպատրաստող) աշխատանքային ժամերին:

(38-րդ կետը խմբ. 02.02.17 N 94-Ն, փոփ., 19.09.19 N 1241-Ն)

39. Դեղատուներ (դեղեր պատրաստող և դեղեր չպատրաստող) պետք է ապահովված լինեն առաջին բժշկական օգնության պարագաներով, որոնց ցանկը հաստատվում է լիազոր մարմնի կողմից:

(39-րդ կետը փոփ. 19.09.19 N 1241-Ն)

40. *(կեսն ուժը կորցրել է 01.08.13 N 956-Ն)*

41. Դեղատան (դեղեր պատրաստող և դեղեր չպատրաստող) առևտրի՝ դեղատնային գործունեության իրականացման լիցենզիայի պատճենները փակցվում են սրահի կամ սպասասրահի՝ սպառողների համար տեսանելի հատվածում:

(41-րդ կետը փոփ. 19.09.19 N 1241-Ն)

42. Դեղատնից (դեղեր պատրաստող և դեղեր չպատրաստող) կարող են վաճառվել ու բաց թողնվել միայն Հայաստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված և պիտանիության ժամկետի մեջ գտնվող դեղերը:

43. *(կեսն ուժը կորցրել է 01.08.13 N 956-Ն, փոփ. 19.09.19 N 1241-Ն)*

43.1. Լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությունն սկսելուց առնվազն հինգ աշխատանքային օր առաջ լիազոր մարմին է ներկայացնում՝

1) դեղատանը (դեղեր պատրաստող և դեղեր չպատրաստող) աշխատանքն իրականացնող՝ համապատասխան որակավորում ունեցող դեղագետի կամ դեղագործի հետ կնքված աշխատանքային պայմանագրի պատճենները:

2) դեղատանը (դեղեր պատրաստող և դեղեր չպատրաստող) աշխատանքն իրականացնող՝ համապատասխան որակավորում ունեցող դեղագետի մասնագիտական կրթության փաստը հավաստող վկայականի և վերջին հինգ տարվա ընթացքում վերապատրաստման վկայականի, իսկ դեղագործի դեպքում՝ համապատասխան որակավորում ունեցող դեղագործի միջին մասնագիտական կրթության փաստը հավաստող վկայականը և վերջին հինգ տարվա ընթացքում վերապատրաստման վկայականը: (Առձեռն փաստաթղթեր ներկայացնելիս պետք է ներկայացվեն դրանց բնօրինակները, իսկ պատճենահանումն անվճար իրականացնում է լիազոր մարմինը:)

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վտանգավոր թափոնների վնասագերծման ոլորտում համապատասխան լիցենզիա ունեցող որևէ կազմակերպության հետ կնքված պայմանագրի պատճենը:

4) դեղատնային գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրի համար էլեկտրոնային առողջապահության համակարգն սպասարկող օպերատորի հետ կնքված էլեկտրոնային առողջապահության համակարգին միացման և սպասարկման պայմանագրի պատճենը:

(43.1-ին կետը լրաց. 01.08.13 N 956-Ն, խմբ. 30.06.16 N 669-Ն, լրաց. 24.08.17 N 1033-Ն, խմբ. 08.02.18 N 105-Ն, փոփ. 19.09.19 N 1241-Ն)

44. Լիցենզավորված անձի կողմից հայտում կամ սույն կարգի 43.1-ին կետով սահմանված փաստաթղթերում ներկայացված դեղատնային գործունեության համար սահմանված պարտադիր պահանջների և պայմանների փոփոխման դեպքում (ներառյալ համապատասխան որակավորում ունեցող դեղագետի կամ դեղագործի, հազեցվածության փոփոխման) լիցենզավորված անձը 3 աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմնին տեղեկացնում է իրականացված փոփոխության մասին՝ կցելով համապատասխան փաստաթղթերը:

(44-րդ կետը խմբ. 01.08.13 N 956-Ն, 30.06.16 N 669-Ն)

44.1. Լիցենզավորված անձի կողմից լիցենզավորող մարմին ներկայացված սույն կարգի 43.1-ին և 44-րդ կետերով նախատեսված փաստաթղթերի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխանության կամ անհամապատասխանության վերաբերյալ լիցենզավորող մարմինը հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրությամբ տեղեկացնում է լիցենզավորված անձին:

(44.1-ին կետը լրաց. 24.08.17 N 1033-Ն)

44.2. Լիցենզավորված անձը սույն կարգի 43.1-ին կետի 2-րդ ենթակետով և 44-րդ կետով նախատեսված փաստաթղթերի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխանության գրությունն ստանալուց երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային առողջապահության համակարգ է մուտքագրում էլեկտրոնային առողջապահության համակարգին միացման և սպասարկման պայմանագրի համաձայն պահանջվող առաջնային տեղեկատվությունը:

(44.2-րդ կետը լրաց. 24.08.17 N 1033-Ն)

44.3. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները պահպանելով՝ լիցենզավորված անձն էլեկտրոնային առողջապահության համակարգում ապահովում է տվյալների թարմացումը, դեղատոմսով բաց թողնվող դեղերի տրամադրման վերաբերյալ տեղեկատվության մուտքագրումը դրանց փաստացի կատարման պահին՝ համաձայն լիցենզավորող մարմնի կողմից հաստատված ընթացակարգի:

(44.3-րդ կետը լրաց. 24.08.17 N 1033-Ն)

III. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

45. Լիցենզիա ստանալու մասին հայտը մերժվում է, եթե՝

1) ներկայացված հայտը և կից փաստաթղթերը թերի են և չեն լրացվել սույն կարգի 10-րդ կետով նախատեսված ժամկետում կամ դրանցում առկա են ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված տեղեկություններ կամ,

2) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքի, այլ իրավական ակտերի և սույն կարգի պահանջներին կամ,

3) իրավաբանական անձն օրենքի կամ իր կանոնադրության համաձայն իրավունք չունի զբաղվելու հայցվող լիցենզավորման ենթակա գործունեությամբ կամ,

4) դեղատնային գործունեության իրականացման համար նախատեսված տարածքը սեփականության, վարձակալության, ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով չի պատկանում հայտատուին կամ, չի ներկայացվել իրավասու մարմնի կողմից հայտատուի անվամբ տրված գործունեության համար նախատեսված տարածքի հատակագիծը կամ,

5) սույն կարգի 16-22-րդ, 26-28-րդ և 31-րդ կետերով սահմանված լիցենզավորման պարտադիր պահանջներին և պայմաններին չհամապատասխանելու դեպքում,

6) (ենթակետն ուժը կորցրել է 01.08.13 N 956-Ն)

7) Լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման վայրում տեղում ուսումնասիրության ժամանակ վերանորոգում է ընթանում, ուսումնասիրության վայրը փակ է, չի ներկայանում իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարը կամ անհատ ձեռնարկատերը կամ վերջիններիս կողմից լիազորված անձը:

(45-րդ կետը խմբ., փոփ. 01.08.13 N 956-Ն, լրաց., փոփ. 08.02.18 N 105-Ն, լրաց. 10.12.20 N 2025-Ն)

46. Լիցենզիա ստանալու հայտը մերժվելու մասին որոշումն ընդունվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքվում է հայտատուին:

Ձև N 1

ՀՀ առողջապահության նախարար
_____ին
(անունը, ազգանունը)

Հ Ա Յ Տ

ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Իրավաբանական անձի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)

2. Գործունեության իրականացման վայրը _____

3. Իրավաբանական անձի պետական գրանցման համարը (անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման համարը) կամ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)

4. Իրավաբանական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) էլեկտրոնային փոստի հասցեն և ինտերնետային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում) և հեռախոսահամարը _____

5. Վճարված է պետական տուրք (նշում կատարվում է պետական տուրքը նախապես վճարված լինելու դեպքում)՝
 այո

6. Դեղատնային գործունեության իրականացման ձևը՝

- դեղատուն (դեղեր պատրաստող)
- դեղատուն (դեղեր չպատրաստող)

7. Թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերի իրացում և (կամ) բացթողում: Սույն կետը լրացվում է թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղեր բաց թողնելու և (կամ) իրացնելու դեպքում՝

այո

8. Դեղատան (դեղեր պատրաստող և դեղեր չպատրաստող) տարածքները և դրանց հազվեցվածությունը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի N 867 որոշման պահանջներին:

9. Դեղատունը (դեղեր պատրաստող և դեղեր չպատրաստող) տեղեկատու է: Սույն կետը լրացվում է տեղեկատու լինելու դեպքում՝

այո

10. Պահեստը (բունկերը) կամ սենյակը, որտեղ գտնվում է հատակին ամրացված չհրկիզվող պահարանը, ապահովված է ազդանշանային համակարգով:

Սույն կետը լրացվում է թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղեր բաց թողնելու և

(կամ) իրացնելու դեպքում՝

այո

11. Կից ներկայացնում եմ (պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկ)՝

լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականի և իրավասու մարմնի կողմից հայտատուի անվամբ տրված՝ գործունեության համար նախատեսված տարածքի հատակագծի պատճենները:

Ներկայացված տեղեկությունների իսկությունը հաստատում եմ՝

_____ (կազմակերպության տնօրենի (անհատ ձեռնարկատիրոջ) ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ 20 թ.

(ձևը խմբ. 01.08.13 N 956-Ն, 02.02.17 N 94-Ն, խմբ., փոփ. 08.02.18 N 105-Ն, լրաց., փոփ. 19.09.19 N 1241-Ն, խմբ. 15.07.21 N 1138-Ն)

Ձև N 2

(ձևն ուժը կորցրել է 01.08.13 N 956-Ն)

Ձև N 3

(ձևն ուժը կորցրել է 01.08.13 N 956-Ն)

Ձև N 4

(ձևն ուժը կորցրել է 01.08.13 N 956-Ն)

Ձև N 5

(ձևն ուժը կորցրել է 01.08.13 N 956-Ն)

Ձև N 6

ՀՀ առողջապահության նախարար
_____ -ին

(անունը, ազգանունը)

Հ Ա Յ Տ

ԱՅՆ ՎԱՅՐՈՒՄ ԵՎ Մ ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Իրավաբանական անձի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)

2. Գործունեության իրականացման վայրը _____

3. Իրավաբանական անձի պետական գրանցման համարը (անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման համարը) կամ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)

4. Իրավաբանական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) էլեկտրոնային փոստի հասցեն և ինտերնետային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում) և հեռախոսահամարը _____

5. Վճարված է պետական տուրք (նշում կատարվում է պետական տուրքը նախապես վճարված լինելու դեպքում)՝

այո

6. Գործող լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, սերիան և համարը

7. Դեղատնային գործունեության իրականացման ձևը՝

- դեղատուն (դեղեր պատրաստող)
- դեղատուն (դեղեր չպատրաստող)

8. Թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերի իրացում և (կամ) բացթողում: Սույն կետը լրացվում է թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղեր բաց թողնելու և (կամ) իրացնելու դեպքում՝

- այո

9. Դեղատան (դեղեր պատրաստող և դեղեր չպատրաստող) տարածքները և դրանց հագեցվածությունը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի N 867 որոշման պահանջներին:

10. Դեղատունը (դեղեր պատրաստող և դեղեր չպատրաստող) տեղեկատու է: Սույն կետը լրացվում է տեղեկատու լինելու դեպքում՝

- այո

11. Պահեստը (բունկերը) կամ սենյակը, որտեղ գտնվում է հատակին ամրացված չհրկիզվող պահարանը, ապահովված է ազդանշանային համակարգով:

Սույն կետը լրացվում է թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղեր բաց թողնելու և (կամ) իրացնելու դեպքում՝

- այո

12. Կից ներկայացնում եմ (պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկ)՝

լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականի և իրավասու մարմնի կողմից հայտատուի անվամբ տրված՝ գործունեության համար նախատեսված տարածքի հատակագծի պատճենները:

Ներկայացված տեղեկությունների իսկությունը հաստատում եմ՝

(կազմակերպության տնօրենի (անհատ ձեռնարկատիրոջ) ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ 20 թ.

(ձևը լրաց. 02.02.17 N 94-Ն, խմբ., փոփ. 08.02.18 N 105-Ն, լրաց., փոփ. 19.09.19 N 1241-Ն, խմբ. 15.07.21 N 1138-Ն)

Ձև N 7

ՀՀ առողջապահության նախարար
_____ -ին
(անունը, ազգանունը)

Հ Ա Յ Տ

ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Իրավաբանական անձի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)

2. Գործունեության իրականացման վայրը _____

3. Իրավաբանական անձի պետական գրանցման համարը (անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման համարը) կամ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)

4. Իրավաբանական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) էլեկտրոնային փոստի հասցեն և ինտերնետային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում) և հեռախոսահամարը _____

5. Հասցեափոխվող լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, սերիան և համարը _____

6. Դեղատնային գործունեության իրականացման ձևը՝

դեղատուն (դեղեր պատրաստող)

դեղատուն (դեղեր չպատրաստող)

7. Թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերի իրացում և (կամ) բացթողում: Սույն կետը լրացվում է թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղեր բաց թողնելու և (կամ) իրացնելու դեպքում՝

այո

8. Դեղատան (դեղեր պատրաստող և դեղեր չպատրաստող) տարածքները և դրանց հագեցվածությունը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի N 867 որոշման պահանջներին:

9. Դեղատունը (դեղեր պատրաստող և դեղեր չպատրաստող) տեղեկատու է: Սույն կետը լրացվում է տեղեկատու լինելու դեպքում՝

այո

10. Պահեստը (բունկերը) կամ սենյակը, որտեղ գտնվում է հատակին ամրացված չհրկիզվող պահարանը, ապահովված է ազդանշանային համակարգով:

Սույն կետը լրացվում է թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղեր բաց թողնելու և (կամ) իրացնելու դեպքում՝

այո

11. Կից ներկայացնում եմ (պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկ)՝

լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականի և իրավասու մարմնի կողմից հայտատուի անվամբ տրված՝ գործունեության համար նախատեսված տարածքի հատակագծի պատճենները և լիցենզիայի բնօրինակը:

Ներկայացված տեղեկությունների իսկությունը հաստատում եմ՝

(կազմակերպության տնօրենի (անհատ ձեռնարկատիրոջ) ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ 20 թ.

(ձևը լրաց. 02.02.17 N 94-Ն, խմբ., փոփ. 08.02.18 N 105-Ն, լրաց., փոփ. 19.09.19 N 1241-Ն, խմբ. 15.07.21 N 1138-Ն)

(հավելվածը խմբ., փոփ., լրաց. 01.08.13 N 956-Ն, խմբ. 30.06.16 N 669-Ն, խմբ., փոփ., լրաց. 02.02.17 N 94-Ն, լրաց. 24.08.17 N 1033-Ն, խմբ., լրաց., փոփ. 08.02.18 N 105-Ն, փոփ., լրաց. 19.09.19 N 1241-Ն, լրաց. 10.12.20 N 2025-Ն, խմբ. 15.07.21 N 1138-Ն)

Հավելված N 4

ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի N 867 որոշման

Ձև N 1



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ Կ-ԴԳ-000000

Տրված՝ _____ 20 թվականին

Գործունեության տեսակը _____

Իրավաբանական անձի անվանումը և գտնվելու վայրը _____

Գործունեության իրականացման վայրը _____

Գործողության ժամկետը՝ անժամկետ:

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարության
աշխատակազմի լիցենզավորման գործակալության պետ _____
(ստորագրությունը)

Կ. Տ.

Ձև N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ Ա-ԴԳ-000000

Տրված՝ _____ 20 թվականին

Գործունեության տեսակը _____

Անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և բնակության վայրը _____

Գործունեության իրականացման վայրը _____

Գործողության ժամկետը՝ անժամկետ:

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարության
աշխատակազմի լիցենզավորման գործակալության պետ _____
(ստորագրությունը)

Կ. Տ.

Հավելված N 5
ՀՀ կառավարության 2002 թվականի
հունիսի 29-ի N 867 որոշման

Կ Ա Ր Գ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԱՆՀԱՏ
ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման իրականացման (այսուհետ՝ բժշկական օգնություն և սպասարկում) լիցենզավորման կարգը՝ համաձայն «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) պահանջների:

2. Հայաստանի Հանրապետությունում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու համար լիցենզիան տալիս (մերժում) է, լիցենզիայի գործողությունը կասեցնում կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում դադարեցնում է Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական լիազոր մարմինը՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ լիազոր մարմին):

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում մասնագիտական գործունեության լիցենզավորման ենթակա են կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից իրականացվող հիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկական օգնությունն ու սպասարկումը:

4. Բժշկական օգնության և սպասարկման իրականացման համար լիցենզիաները տրվում են անժամկետ՝ օրենքով և սույն կարգով նախատեսված բոլոր փաստաթղթերը ներկայացվելուց հետո՝ 23 աշխատանքային օրվա ընթացքում: **(4-րդ կետը փոփ. 01.08.13 N 956-Ն, խմբ. 30.06.16 N 669-Ն)**

5. Լիցենզիա տալու համար գանձվում է պետական տուրք «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով: Ընդ որում՝

1) լիցենզավորող մարմինը լիցենզիայի կամ դրա կրկնօրինակի տրման, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայի վերաձևակերպման, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու մասին որոշման ընդունումից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով դրա մասին տեղեկացնում է հայտատուին: Տեղեկացմամբ հայտատուն պետք է նախազգուշացվի սույն կետի 4-րդ ենթակետով նախատեսված հետևանքների մասին.

2) հայտատուն սույն կետի 1-ին ենթակետով սահմանված ծառայության մատուցման համար օրենքով սահմանված պետական տուրքը պարտավոր է վճարել ոչ ուշ, քան լիցենզիան կամ դրա կրկնօրինակը տալու, լիցենզիան վերաձևակերպելու, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու մասին հայտը բավարարելու վերաբերյալ որոշման ընդունումից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում.

3) հայտատուն լիցենզավորող մարմին պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ կարող է չներկայացնել: Հայտատուի կողմից պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ չներկայացվելու դեպքում լիցենզավորող մարմինը լիցենզիայի կամ դրա կրկնօրինակի տրման, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայի վերաձևակերպման, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու հայտը բավարարելու մասին որոշումն ընդունելուց հետո գանձապետական առցանց կառավարման համակարգի կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով հավաստիանում է պետական տուրքի վճարման մասին և հայտատուին պատշաճ ձևով հանձնում կամ ուղարկում է լիցենզիան, լիցենզիայի կրկնօրինակը, ժամկետը երկարաձգված լիցենզիան, վերաձևակերպված լիցենզիան, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու լիցենզիան, ինչպես նաև դրանց վերաբերյալ համապատասխան որոշումները.

4) սույն կետի 2-րդ ենթակետով նախատեսված ժամկետում հայտատուի կողմից պետական տուրքը չվճարվելու դեպքում համապատասխան հայտը մերժվում է պետական տուրքը չվճարելու հիմքով: Հայտը մերժելուց հետո լիցենզավորող մարմնի որոշումը չեղյալ է ճանաչվում:

(5-րդ կետը խմբ. 01.08.13 N 956-Ն, 02.02.17 N 94-Ն)

5.1. Լիցենզավորված անձը լիցենզիա տալու մասին որոշումն ստանալուց հետո բժշկական օգնության և սպասարկման իրականացման յուրաքանչյուր վայրի համար հինգ աշխատանքային օրվա ընթացքում պետք է էլեկտրոնային առողջապահության համակարգին միացման և սպասարկման պայմանագիր կնքի էլեկտրոնային առողջապահության համակարգն սպասարկող օպերատորի հետ:

(5.1-ին կետը լրաց. 24.08.17 N 1033-Ն)

6. Բժշկական օգնության և սպասարկման իրականացման դեպքում աշխատանքն իրականացնող համապատասխան մասնագետների գործունեության համար պահանջվում է մասնագիտական որակավորման ստուգում, որն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

7. Իրենց գործունեության իրականացման ընթացքում թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պարունակող դեղերի բացթողում իրականացնող կամ կիրառող անհատ ձեռնարկատերերին կամ կազմակերպություններին բժշկական օգնության և սպասարկման իրականացման լիցենզիա տրամադրելիս՝ լիցենզիայի «Գործունեության տեսակը» տողում, գործունեության տեսակը նշելուց բացի, կատարվում է հետևյալ նշումը. «(ներառյալ թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պարունակող դեղերի բացթողում և (կամ) կիրառում)»՝ ընդգծելով կոնկրետ ձևը:

8. Սույն կարգի համաձայն տրված լիցենզիաները գործում են միայն լիցենզիայում նշված վայրում:

9. Լիցենզիայի վերաձևակերպումը, գործողության կասեցումը և դադարեցումը կատարվում են օրենքով սահմանված կարգով:

II. ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒԻ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

10. Հայտատուն բժշկական օգնության և սպասարկման գործունեության լիցենզավորման համար օրենքի համաձայն ներկայացնում է՝

1) լիցենզիա ստանալու մասին հայտ (ձևը կցվում է).

2) լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի անվամբ սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականի և իրավասու մարմնի կողմից տրված՝ գործունեության համար նախատեսված հայտատուի անվամբ տարածքի հատակագծի պատճենները, բացառությամբ կալանավորված անձանց և դատապարտյալներին բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման նպատակով բժշկական օգնության և սպասարկման իրականացման լիցենզիա ստանալու համար դիմած պետական ոչ առևտրային կազմակերպություն հանդիսացող հայտատուների, որոնց դեպքում ներկայացվում է արդարադատության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարության կողմից համապատասխան տարածքների առկայության վերաբերյալ տեղեկանք, բացառությամբ բժշկական օգնության և սպասարկման միայն շարժական տեսակով գործունեության իրականացման լիցենզիա ստանալու համար դիմած անհատ ձեռնարկատերերի և ֆիզիկական անձանց:

3) *(Ենթակետն ուժը կորցրել է 02.02.17 N 94-Ն)*

(10-րդ կետը խմբ. 01.08.13 N 956-Ն, խմբ., փոփ. 02.02.17 N 94-Ն, խմբ. 09.08.18 N 871-Ն, լրաց. 15.07.21 N 1138-Ն)

10.1. Այլ վայրում ևս բժշկական օգնության և սպասարկման իրականացման լիցենզիա ստանալու կամ բժշկական օգնության ու սպասարկման իրականացման վայրի փոփոխման դեպքում լիցենզավորված անձը լիազոր մարմին է ներկայացնում՝

1) այլ վայրում ևս բժշկական օգնության և սպասարկման իրականացման լիցենզիա ստանալու կամ բժշկական օգնության ու սպասարկման իրականացման վայրի փոփոխման մասին հայտ՝ համաձայն NN 8 և 9 ձևերի.

2) այլ վայրում ևս բժշկական օգնության և սպասարկման իրականացման լիցենզիա ստանալու կամ բժշկական օգնության ու սպասարկման իրականացման վայրի փոփոխման դեպքում բժշկական օգնության և սպասարկման իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ լիցենզավորված անձի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականի և հայտատուի անվամբ տրված՝ գործունեության համար նախատեսված տարածքի հատակագծի պատճենները.

3) լիցենզիայի բնօրինակը՝ գործունեության իրականացման վայրի փոփոխման դեպքում:

(10.1-ին կետը լրաց. 02.02.17 N 94-Ն)

11. Բժշկական օգնության և սպասարկման իրականացման, այլ վայրում ևս բժշկական օգնության ու սպասարկման իրականացման լիցենզիա ստանալու կամ բժշկական օգնության և սպասարկման իրականացման վայրի փոփոխման մասին հայտում կամ կից փաստաթղթերում ոչ էական թերությունների (վրիպակներ, ոչ իրավաբանական անճշտություններ, թվաբանական սխալներ և նման այլ բացթողումներ) առկայության, ինչպես նաև փաստաթղթերը թերի լինելու դեպքում լիցենզավորող մարմինը դրանք հայտնաբերելու պահից 2 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային նամակագրության կամ հեռախոսային կապի միջոցով հայտատուին առաջարկում է 5 աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թերությունները և փաստաթղթերը ներկայացնել լիազոր մարմին:

(11-րդ կետը խմբ. 01.08.13 N 956-Ն, 02.02.17 N 94-Ն)

12. *(կետն ուժը կորցրել է 19.09.19 N 1241-Ն)*

III. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

13. Բժշկական օգնության և սպասարկման իրականացման լիցենզիայի պատճենները փակցվում են բժշկական հաստատության՝ սպառողների համար տեսանելի հատվածում:

14. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը պետք է ապահովեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ բժշկական հաստատություններին ներկայացվող կառուցվածքային, մասնագիտական, ինչպես նաև բժշկական սարքավորումներով ապահովվածությանը ներկայացվող պայմաններին և պահանջներին ու շինարարական նորմերին համապատասխանությունը:

15. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող այն կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը, որոնք իրենց գործունեության ընթացքում կիրառում և (կամ) բաց են թողնում թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պարունակող դեղեր, պետք է ունենան թմրամիջոցների և հոգեմետ նյութերի պահպանման համար պահեստ (բունկեր) կամ հատակին ամրացված չիրկիզվող պահարան: Պահեստը պետք է ունենա խոնավաչափ և սարքավորված լինի ազդանշանային համակարգով՝ ձայնային կամ լուսային ազդանշանը պահպանության դիտակետին միացնելով կամ շենքի արտաքին մասին ամրացնելով: Ազդանշանային սարքավորումների էլեկտրասնուցման համակարգը պետք է ունենա պահեստային էլեկտրասնուցման աղբյուր:

16. Սույն կարգի 15-րդ կետում նշված պահեստը (առկայության դեպքում) դեղերի պահպանման պատշաճ պայմաններ ապահովելու նպատակով պետք է կահավորված լինեն փակ պահարաններով, վիրակապական և ռետինե

ապրանքների համար պետք է ունենա առանձին պահարաններ ու խոնավաչափ: Պահեստում համապատասխան տեխնիկատեխնոլոգիական հագեցվածությամբ պետք է ապահովվի դեղերի պահպանման համար անհրաժեշտ ջերմային ռեժիմ:

17. Բժշկական սարքավորումների օգտագործման ժամկետը չպետք է գերազանցի լիազոր մարմնի կողմից՝ առանձին բժշկական սարքավորումների համար սահմանված ժամկետները:

17.1. Եթե սույն որոշման պարտադիր պահանջներով ու պայմաններով սահմանված մեկ և ավելի տեխնիկական սարքավորումների փոխարեն ներկայացվում է նորագույն տեխնիկական սարքավորում, որի տեխնիկական անձնագրի համաձայն տվյալ սարքավորումը հնարավոր է կիրառել մի քանի գործողություններ կատարելու համար, ապա նախապատվությունը տրվում է նորագույն տեխնիկական սարքավորմանը:

(17.1-ին կետը լրաց. 02.02.17 N 94-Ն, փոփ. 26.01.23 N 120-Ն)

18. Լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությունն սկսելուց առնվազն հինգ աշխատանքային օր առաջ լիազոր մարմին է ներկայացնում գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրի համար էլեկտրոնային առողջապահության համակարգն սպասարկող օպերատորի հետ կնքված էլեկտրոնային առողջապահության համակարգին միացման և սպասարկման պայմանագիրը, համապատասխան որակավորված անձի մասին տեղեկատվություն՝ կցելով համապատասխան որակավորում ունեցող անձի մասնագիտական կրթության փաստը հավաստող վկայականը և վերջին հինգ տարվա ընթացքում վերապատրաստման վկայականը՝ համաձայն սույն որոշման և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վտանգավոր թափոնների վնասագերծման ոլորտում համապատասխան լիցենզիա ունեցող որևէ կազմակերպության հետ կնքված պայմանագիրը: Լիցենզիա ստանալուց հետո բուժաշխատողի փոփոխության դեպքում լիցենզավորված անձը սույն կետով նախատեսված փաստաթղթերը լիազոր մարմին է ներկայացնում փոփոխություններից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում: (Առձեռն փաստաթղթեր ներկայացնելիս պետք է ներկայացվեն դրանց բնօրինակները, իսկ պատճենահանումն անվճար իրականացնում է լիազոր մարմինը:)

(18-րդ կետը խմբ. 01.08.13 N 956-Ն, 30.06.16 N 669-Ն, լրաց. 24.08.17 N 1033-Ն, խմբ. 08.02.18 N 105-Ն, փոփ. 26.01.23 N 120-Ն)

18.1. Շտապ օգնության մեքենաների՝ տեխնիկական պատճառներով գլոբալ տեղորոշման համակարգի (ՋԻՓԻԷՄ/GPS) անջատման դեպքում շտապ և անհետաձգելի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը դրա մասին մեկօրյա ժամկետում գրավոր տեղեկացնում են լիցենզավորող մարմնին և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը:

(18.1-ին կետը լրաց. 15.04.16 N 404-Ն)

19. **(կետն ուժը կորցրել է 01.08.13 N 956-Ն)**

19.1. Լիցենզավորված անձի կողմից լիցենզավորող մարմին ներկայացված սույն կարգի 18-րդ կետով նախատեսված փաստաթղթերի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխանության կամ անհամապատասխանության վերաբերյալ լիցենզավորող մարմինը հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրությամբ տեղեկացնում է լիցենզավորված անձին:

(19.1-ին կետը լրաց. 24.08.17 N 1033-Ն)

19.2. Լիցենզավորված անձը սույն կարգի 18-րդ կետով նախատեսված փաստաթղթերի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխանության գրությունն ստանալուց երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային առողջապահության համակարգ է մուտքագրում էլեկտրոնային առողջապահության համակարգին միացման և սպասարկման պայմանագրի համաձայն պահանջվող առաջնային տեղեկատվությունը:

(19.2-րդ կետը լրաց. 24.08.17 N 1033-Ն)

19.3. Լիազոր մարմնի կողմից էլեկտրոնային առողջապահության համակարգի տվյալների փոխանցումն ապահովող ներքին ցանցի (data network) ներդրման և սպասարկման դեպքում լիազոր մարմնի ծանուցումն ստանալուց հետո 14-օրյա ժամկետում, լիցենզավորված անձը միանում է ներքին ցանցին՝ միևնույն ժամանակ 2018 թվականի ապրիլի 1-ից ունենալով էլեկտրոնային առողջապահության համակարգի տվյալների փոխանցման ցանցն սպասարկող մատակարարից տարբերվող այլ մատակարարի կողմից մատուցվող պահուստային կապուղի՝ ապահովելով էլեկտրոնային առողջապահության համակարգին միացված մշտապես գործող ինտերնետ կապուղի յուրաքանչյուր վայրում առնվազն 1 մբ/վ սիմետրիկ ինտերնետ սնուցմամբ առաջին 5 օգտատիրոջ համար, իսկ 5-ից ավելի օգտատերերի դեպքում՝ յուրաքանչյուր 10 օգտատիրոջ հաշվով լրացուցիչ 2 մբ/վ սիմետրիկ ինտերնետ սնուցմամբ:

(19.3-րդ կետը լրաց. 24.08.17 N 1033-Ն)

19.4. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները պահպանելով՝ լիցենզավորված անձն էլեկտրոնային առողջապահության համակարգում ապահովում է տվյալների թարմացումը, պացիենտների այցելությունների, մատուցվող ծառայությունների, բժշկական միջամտությունների, ախտորոշումների, նշանակումների, անձի առողջության և բժշկական պատմագրի տեղեկատվության մուտքագրումը դրանց փաստացի կատարման պահին՝ համաձայն լիցենզավորող մարմնի կողմից հաստատված ընթացակարգի:

(19.4-րդ կետը լրաց. 24.08.17 N 1033-Ն)

20. Լիցենզիա ստանալու մասին հայտը մերժվում է, եթե՝

- 1) ներկայացված հայտը և կից փաստաթղթերը թերի են և չեն լրացվել սույն կարգի 11-րդ կետով նախատեսված ժամկետում կամ դրանցում առկա են ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված տեղեկություններ կամ,
 - 2) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքի, այլ իրավական ակտերի և սույն կարգի պահանջներին կամ,
 - 3) կազմակերպությունն օրենքի կամ իր կանոնադրության համաձայն իրավունք չունի զբաղվելու հայցվող լիցենզավորման ենթակա գործունեությամբ կամ,
 - 4) բժշկական օգնության և սպասարկման իրականացման համար նախատեսված տարածքը սեփականության, վարձակալության, ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով չի պատկանում հայտատուին կամ, չի ներկայացվել իրավասու մարմնի կողմից հայտատուի անվամբ տրված գործունեության համար նախատեսված տարածքի հատակագիծը կամ,
 - 5) սույն կարգի 14-17-րդ կետերով սահմանված լիցենզավորման պարտադիր պահանջներին և պայմաններին չհամապատասխանելու դեպքում կամ,
 - 6) *(ենթակետն ուժը կորցրել է 01.08.13 N 956-Ն)*
 - 7) *(ենթակետն ուժը կորցրել է 01.08.13 N 956-Ն)*
 - 8) *(ենթակետն ուժը կորցրել է 01.08.13 N 956-Ն)*
 - 9) Լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման վայրում տեղում ուսումնասիրության ժամանակ վերանորոգում է ընթանում, ուսումնասիրության վայրը փակ է, չի ներկայանում իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարը կամ անհատ ձեռնարկատերը կամ վերջիններիս կողմից լիազորված անձը:
(20-րդ կետը փոփ. 01.08.13 N 956-Ն, լրաց. 08.02.18 N 105-Ն, 10.12.20 N 2025-Ն)
21. Լիցենզիա ստանալու մասին հայտը մերժվելու վերաբերյալ որոշումն ընդունվելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում այն պատշաճ ձևով ուղարկվում է հայտատուին:
(21-րդ կետը խմբ. 02.02.17 N 94-Ն)

Ձև N 1

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության
 լիցենզավորման հանձնաժողովի նախագահ
 _____ ին
 (անունը, ազգանունը)

Հ Ա Յ Տ
ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ
(ձևն ուժը կորցրել է 30.06.16 N 669-Ն)

Ձև N 2

ՀՀ առողջապահության նախարար
 _____ ին
 (անունը, ազգանունը)

Հ Ա Յ Տ

ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

- 1. Իրավաբանական անձի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)
- 2. Գործունեության իրականացման վայրը _____
- 3. Իրավաբանական անձի պետական գրանցման համարը (անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման համարը) կամ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)
- 4. Իրավաբանական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) էլեկտրոնային փոստի հասցեն և ինտերնետային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում) և հեռախոսահամարը _____
- 5. Վճարված է պետական տուրք (նշում կատարվում է պետական տուրքը նախապես վճարված լինելու դեպքում)՝

այո

6. Գործունեության տեսակները համապատասխանում են «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բժշկական օգնության և սպասարկման պայմաններին (բժշկական կազմակերպությունից դուրս, արտահիվանդանոցային, ցերեկային ստացիոնար, հիվանդանոցային), ՀՀ կառավարության 2008 թվականի մարտի 27-ի N 276-Ն որոշմամբ հաստատված բժշկական օգնության և սպասարկման տեսակների ցանկին: Դրանք հետևյալն են՝

7. Թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերի կիրառում և (կամ) բացթողում: Սույն կետը լրացվում է թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերի կիրառման և (կամ) բացթողման նպատակով՝

այո

8. Հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնության և սպասարկման դեպքում՝ նախատեսվող մահճակալների թիվը՝ ըստ բաժանմունքների (բաժինների)՝

9. Տեխնիկական հագեցվածությունը և մասնագիտական որակավորումը համապատասխանում են ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի N 867 որոշման պահանջներին:

10. Ստոմատոլոգիական բժշկական հաստատությունում իրականացվելու են իմպլանտոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում: Տեխնիկական հագեցվածությունը և մասնագիտական որակավորումը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի N 867 որոշման պահանջներին:

Սույն կետը լրացվում է ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող այն կազմակերպությունների կողմից, որոնք պետք է իրականացնեն իմպլանտոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում:

11. Ստոմատոլոգիական բժշկական հաստատությունն ունի՝

- հանդերձարան կամ հանդերձապահարան
- մատենավարման սենյակ կամ մատենավարման ծառայություն
- Ճառագայթային ախտորոշման կամ նորագույն ռենտգեն սարք (ռենտգեն) սենյակ

12. Առկա է՝

- հատակին ամրացված չհրկիզվող պահարան կամ
- պահեստ (բունկեր), որն ունի՝
- խոնավաչափ
- փակ պահարաններ

վիրակապակց և ռետինե սպրանքների համար առանձին պահարաններ: Սույն կետը լրացվում է թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղեր բաց թողնելու և (կամ) կիրառելու դեպքում:

13. Պահեստը (բունկերը) կամ սենյակը, որտեղ գտնվում է հատակին ամրացված չհրկիզվող պահարանը, ապահովված է ազդանշանային համակարգով:

Սույն կետը լրացվում է թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղեր բաց թողնելու և (կամ) կիրառելու դեպքում:

14. Կից ներկայացնում եմ (պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկ)՝

բժշկական օգնության և սպասարկման իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականի և իրավասու մարմնի կողմից հայտատուի անվամբ տրված՝ գործունեության համար նախատեսված տարածքի հատակագծի պատճենները:

Ներկայացված տեղեկությունների իսկությունը հաստատում եմ

(կազմակերպության տնօրենի (անհատ ձեռնարկատիրոջ) ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ 20 թ.

(ձևը խմբ. 01.08.13 N 956-Ն, խմբ., լրաց. 15.04.16 N 404-Ն, խմբ. 02.02.17 N 94-Ն, լրաց. 09.08.18 N 871-Ն, լրաց., խմբ. 08.02.18 N 105-Ն, լրաց. 10.12.20 N 2025-Ն, խմբ. 15.07.21 N 1138-Ն, 26.01.23 N 120-Ն)

ՀԱՅՅՎՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 27-Ի N 276-Ն ՈՐՈՇՄԱՆ
(ձև նույն կորցրել է 02.02.17 N 94-Ն)

Ձև N 4

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 1936-Ն ԵՎ (ԿԱՄ)
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N
1275-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ
(ձև նույն կորցրել է 02.02.17 N 94-Ն)

Ձև N 5

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(ձև նույն կորցրել է 02.02.17 N 94-Ն)

Ձև N 6

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՇՈՒՐՁՕՐՅԱ ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲԺՇԿԱԿԱՆ
ԿԱԴՐԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ՝ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 1936-Ն ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ
(ձև նույն կորցրել է 02.02.17 N 94-Ն)

Ձև N 7

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՀԵՍԻ
ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
(ձև նույն կորցրել է 02.02.17 N 94-Ն)

Ձև N 8

ՀՀ առողջապահության նախարար
_____ -ին
(անունը, ազգանունը)

Հ Ա Յ Տ

ԱՅԼ ՎԱՅՐՈՒՄ ԵՎՍ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ
ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Իրավաբանական անձի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)

2. Գործունեության իրականացման վայրը _____

3. Իրավաբանական անձի պետական գրանցման համարը (անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման համարը) կամ
հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)

4. Իրավաբանական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) էլեկտրոնային փոստի հասցեն և ինտերնետային
պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում) և հեռախոսահամարը _____

- 5. Վճարված է պետական տուրք (նշում կատարվում է պետական տուրքը նախապես վճարված լինելու դեպքում)՝
 - այո
- 6. Գործող լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, սերիան և համարը

7. Գործունեության տեսակները համապատասխանում են «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բժշկական օգնության և սպասարկման պայմաններին (բժշկական կազմակերպությունից դուրս, արտահիվանդանոցային, ցերեկային ստացիոնար, հիվանդանոցային), ՀՀ կառավարության 2008 թվականի մարտի 27-ի N 276-Ն որոշմամբ հաստատված բժշկական օգնության և սպասարկման տեսակների ցանկին: Դրանք հետևյալն են՝

8. Թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերի կիրառում և (կամ) բացթողում: Սույն կետը լրացվում է թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերի կիրառման և (կամ) բացթողման նպատակով՝

- այո
- 9. Հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնության և սպասարկման դեպքում՝ նախատեսվող մահճակալների թիվը՝ ըստ բաժանմունքների (բաժինների)՝

10. Տեխնիկական հագեցվածությունը և մասնագիտական որակավորումը համապատասխանում են ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի N 867 որոշման պահանջներին:

11. Ստոմատոլոգիական բժշկական հաստատությունում իրականացվելու են իմպլանտոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում: Տեխնիկական հագեցվածությունը և մասնագիտական որակավորումը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հունիսի 29-ի N 867 որոշման պահանջներին:

Սույն կետը լրացվում է ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող այն կազմակերպությունների կողմից, որոնք պետք է իրականացնեն իմպլանտոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում:

12. Ստոմատոլոգիական բժշկական հաստատությունն ունի՝

- հանդերձարան կամ հանդերձապահարան
- մատենավարման սենյակ կամ մատենավարման ծառայություն
- ճառագայթային ախտորոշման կամ նորագույն ռենտգեն սարք (ռենտգեն) սենյակ

13. Առկա է՝

- հատակին ամրացված չհրկիզվող պահարան կամ
- պահեստ (բունկեր), որն ունի՝
- խոնավաչափ
- փակ պահարաններ

վիրակապակայան և ռետինե ապրանքների համար առանձին պահարաններ: Սույն կետը լրացվում է թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղեր բաց թողնելու և (կամ) կիրառելու դեպքում:

14. Պահեստը (բունկերը) կամ սենյակը, որտեղ գտնվում է հատակին ամրացված չհրկիզվող պահարանը, ապահովված է ազդանշանային համակարգով:

Սույն կետը լրացվում է թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղեր բաց թողնելու և (կամ) կիրառելու դեպքում:

15. Կից ներկայացնում եմ (պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկ)՝

բժշկական օգնության և սպասարկման իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականի և իրավասու մարմնի կողմից հայտատուի անվամբ տրված՝ գործունեության համար նախատեսված տարածքի հատակագծի պատճենները:

Ներկայացված տեղեկությունների իսկությունը հաստատում եմ

(կազմակերպության տնօրենի (անհատ ձեռնարկատիրոջ) ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ 20 թ.

(ձևը լրաց. 02.02.17 N 94-Ն, խմբ., լրաց. 08.02.18 N 105-Ն, լրաց. 10.12.20 N 2025-Ն, խմբ. 15.07.21 N 1138-Ն, 26.01.23 N 120-Ն)

ՀՀ առողջապահության նախարար
-ին
(անունը, ազգանունը)

Հ Ա Յ Տ

ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Իրավաբանական անձի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)

2. Գործունեության իրականացման վայրը _____

3. Իրավաբանական անձի պետական գրանցման համարը (անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման համարը) կամ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)

4. Իրավաբանական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) էլեկտրոնային փոստի հասցեն և ինտերնետային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում) և հեռախոսահամարը _____

5. Գործող լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, սերիան և համարը _____

6. Գործունեության տեսակները համապատասխանում են «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բժշկական օգնության և սպասարկման պայմաններին (բժշկական կազմակերպությունից դուրս, արտահիվանդանոցային, ցերեկային ստացիոնար, հիվանդանոցային), Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 27-ի N 276-Ն որոշմամբ հաստատված բժշկական օգնության և սպասարկման տեսակների ցանկին: Դրանք հետևյալն են՝

7. Թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերի կիրառում և (կամ) բացթողում: Սույն կետը լրացվում է թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերի կիրառման և (կամ) բացթողման նպատակով՝

այո

8. Հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնության և սպասարկման դեպքում՝ նախատեսվող մահճակալների թիվը՝ ըստ բաժանմունքների (բաժինների)՝

9. Տեխնիկական հագեցվածությունը և մասնագիտական որակավորումը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի N 867 որոշման պահանջներին:

10. Ստոմատոլոգիական բժշկական հաստատությունում իրականացվելու են իմպլանտոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում: Տեխնիկական հագեցվածությունը և մասնագիտական որակավորումը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի N 867 որոշման պահանջներին:

Սույն կետը լրացվում է ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող այն կազմակերպությունների կողմից, որոնք պետք է իրականացնեն իմպլանտոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում:

11. Ստոմատոլոգիական բժշկական հաստատությունն ունի՝

հանդերձարան կամ հանդերձապահարան

մատենավարման սենյակ կամ մատենավարման ծառայություն

ճառագայթային ախտորոշման կամ նորագույն ռենտգեն սարք (ռենտգեն) սենյակ

12. Առկա է՝

հատակին ամրացված չհրկիզվող պահարան կամ

պահեստ (բունկեր), որն ունի՝

խոնավաչափ

փակ պահարաններ

վիրակապակման և ռետինե ապրանքների համար առանձին պահարաններ: Սույն կետը լրացվում է թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղեր բաց թողնելու և (կամ) կիրառելու դեպքում:

13. Պահեստը (բունկերը) կամ սենյակը, որտեղ գտնվում է հատակին ամրացված չհրկիզվող պահարանը, սպահովված է ազդանշանային համակարգով:

Սույն կետը լրացվում է թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղեր բաց թողնելու և (կամ) կիրառելու դեպքում:

14. Կից ներկայացնում եմ (պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկ)՝ բժշկական օգնության և սպասարկման իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականի և իրավասու մարմնի կողմից հայտատուի անվամբ տրված՝ գործունեության համար նախատեսված տարածքի հատակագծի պատճենները և լիցենզիայի բնօրինակը:

Ներկայացված տեղեկությունների իսկությունը հաստատում եմ

(կազմակերպության տնօրենի (անհատ ձեռնարկատիրոջ) ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ 20 թ.

(ձևը լրաց. 02.02.17 N 94-Ն, խմբ., լրաց., փոփ. 08.02.18 N 105-Ն, լրաց. 10.12.20 N 2025-Ն, խմբ. 15.07.21 N 1138-Ն, 26.01.23 N 120-Ն)

(հավելվածը փոփ., խմբ. 01.08.13 N 956-Ն, լրաց., խմբ. 15.04.16 N 404-Ն, փոփ., խմբ. 30.06.16 N 669-Ն, խմբ., փոփ., լրաց. 02.02.17 N 94-Ն, լրաց. 24.08.17 N 1033-Ն, խմբ., լրաց. 09.08.18 N 871-Ն, խմբ., լրաց., փոփ. 08.02.18 N 105-Ն, փոփ. 19.09.19 N 1241-Ն, լրաց. 10.12.20 N 2025-Ն, լրաց., խմբ. 15.07.21 N 1138-Ն, փոփ., խմբ. 26.01.23 N 120-Ն)

Հավելված N 6
ՀՀ կառավարության 2002 թվականի
հունիսի 29-ի N 867 որոշման

Ձև N 1



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լ Ի Ց Ե Ն Ջ Ի Ա Կ - Բ Օ - 0 0 0 0 0 0

Տրված՝ _____ 20 թվականին
Բժշկական օգնության և սպասարկման տեսակը _____

Բժշկական օգնության և սպասարկման պայմանը (բժշկական կազմակերպությունից դուրս, արտահիվանդանոցային, ցերեկային ստացիոնար, հիվանդանոցային) _____

Կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը _____

Կազմակերպության գործունեության իրականացման վայրը _____

Գործողության ժամկետը՝ անժամկետ:

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարության
աշխատակազմի լիցենզավորման գործակալության պետ

(ստորագրությունը)

Կ. Տ.

(ձևը փոփ. 10.12.20 N 2025-Ն)

Ձև N 2



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լ Ի Ց Ե Ն Ջ Ի Ա Ա - Բ Օ - 0 0 0 0 0

Տրված՝ _____ 20 թվականին
Բժշկական օգնության և սպասարկման տեսակը _____

Բժշկական օգնության և սպասարկման պայմանը (բժշկական կազմակերպությունից դուրս,
արտահիվանդանոցային, ցերեկային ստացիոնար, հիվանդանոցային) _____

Անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և բնակության վայրը _____

Անհատ ձեռնարկատիրոջ գործունեության իրականացման վայրը _____

Գործողության ժամկետը՝ անժամկետ:

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարության
աշխատակազմի լիցենզավորման գործակալության պետ

(ստորագրությունը)

Կ. Տ.

(ձևը փոփ. 10.12.20 N 2025-Ն)

(հավելվածը փոփ. 10.12.20 N 2025-Ն)

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ), ՄԻԶԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ (ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ) ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ (հավելվածն ուժը կորցրել է 04.06.14 N 573-Ն)

Հավելված N 8
ՀՀ կառավարության 2002 թվականի
հունիսի 29-ի N 867 որոշման

(հավելվածն ուժը կորցրել է 04.06.14 N 573-Ն)

Հավելված N 9
ՀՀ կառավարության 2002 թվականի
հունիսի 29-ի N 867 որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՂԵՐԻ ՄԵԾԱԾԱԽ ԻՐԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից լիցենզավորման ենթակա դեղերի մեծածախ իրացման լիցենզավորման կարգը՝ համաձայն «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) պահանջների:
2. Հայաստանի Հանրապետությունում դեղերի մեծածախ իրացման համար լիցենզիան տալիս (մերժում) է, լիցենզիայի գործողությունը կասեցնում կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում դադարեցնում է Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական լիազոր մարմինը՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ լիազոր մարմին):
3. Դեղերի մեծածախ իրացման լիցենզիաների, այլ վայրում ևս դեղերի մեծածախ իրացման կամ դեղերի մեծածախ իրացման վայրի փոփոխման կամ նոր ներդիրի տրամադրումն իրականացվում է փորձաքննություն իրականացնելու լիցենզիա ունեցող անձի (այսուհետ՝ փորձաքննություն իրականացնող կազմակերպություն) կողմից տրված դրական փորձագիտական եզրակացության հիման վրա:
4. Դեղերի մեծածախ իրացման լիցենզիաները տրվում են անժամկետ՝ օրենքով և սույն կարգով նախատեսված բոլոր փաստաթղթերը ներկայացվելուց հետո 23 աշխատանքային օրվա ընթացքում:
5. Լիցենզիա տալու համար գանձվում է պետական տուրք «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով, որի վճարումն իրականացվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:
6. Սույն կարգի համաձայն տրված լիցենզիաները գործում են միայն լիցենզիայում նշված վայրում:
7. Դեղերի մեծածախ իրացման լիցենզիայի հետ մեկտեղ տրամադրվում է սույն կարգով սահմանված ձևի ներդիր՝ համաձայն N 1 ձևի, որում պարտադիր պետք է նշում կատարվի մատակարարի կողմից մեծածախ իրացման ենթակա դեղերի և գործունեության շրջանակի մասին:
8. Լիցենզիայի վերաձևակերպումը կամ գործողության կասեցումը կամ դադարեցումը կատարվում են օրենքով սահմանված կարգով:
- 8.1. Լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությունն սկսելուց առնվազն հինգ աշխատանքային օր առաջ լիազոր մարմին է ներկայացնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վտանգավոր թափոնների վնասագերծման ոլորտում համապատասխան լիցենզիա ունեցող որևէ կազմակերպության հետ կնքված պայմանագիրը:

(8.1-ին կետը լրաց. 04.05.23 N 672-Ն)

(մինչև 04.05.23 N 672-Ն որոշումն ուժի մեջ մտնելը դեղերի մեծածախ իրացման լիցենզիա ստացած անհատ ձեռնարկատերերի և իրավաբանական անձանց համար 8.1-ին կետն ուժի մեջ է մտնում 04.05.23

**II. ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԼՊԱՏԱԿՈՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՀԱՏ
ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

- 9. Հայտատուն դեղերի մեծածախ իրացման լիցենզավորման համար օրենքի համաձայն ներկայացնում է՝
 - 1) լիցենզիա ստանալու մասին հայտ՝ համաձայն N 2 ձևի.
 - 2) լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականի և իրավասու մարմնի կողմից հայտատուի անվամբ տրված գործունեության համար նախատեսված տարածքի հատակագիծը.
 - 3) փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրված դրական փորձագիտական եզրակացություն:
- 10. Այլ վայրում ևս դեղերի մեծածախ իրացման կամ դեղերի մեծածախ իրացման վայրի փոփոխման դեպքում լիցենզավորված անձը լիազոր մարմին է ներկայացնում՝
 - 1) այլ վայրում ևս դեղերի մեծածախ իրացման լիցենզիա ստանալու կամ դեղերի մեծածախ իրացման վայրի փոփոխման մասին հայտ՝ համաձայն NN 3 և 4 ձևերի.
 - 2) այլ վայրում ևս դեղերի մեծածախ իրացման կամ դեղերի մեծածախ իրացման վայրի փոփոխման դեպքում լիցենզավորված անձի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականը և հայտատուի անվամբ (անվանմամբ) տրված՝ գործունեության համար նախատեսված տարածքի հատակագիծը.
 - 3) փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրված դրական փորձագիտական եզրակացություն.
 - 4) լիցենզիայի բնօրինակը՝ գործունեության իրականացման վայրի փոփոխման դեպքում:
- 11. Նոր ներդիրի տրամադրման համար լիցենզավորված անձը լիազոր մարմին է ներկայացնում՝
 - 1) դիմում նոր ներդիր ստանալու մասին.
 - 2) փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրված դրական փորձագիտական եզրակացություն:
- 12. Դեղերի մեծածախ իրացման լիցենզիա ստանալու, այլ վայրում ևս դեղերի մեծածախ գործունեության իրականացման լիցենզիա ստանալու կամ դեղերի մեծածախ գործունեության իրականացման վայրի փոփոխման մասին հայտերում կամ կից փաստաթղթերում ոչ էական թերությունների (վրիպակներ, ոչ իրավաբանական անճշտություններ, թվաբանական սխալներ և նման այլ բացթողումներ) առկայության, ինչպես նաև փաստաթղթերը թերի լինելու դեպքում լիցենզավորող մարմինը դրանք հայտնաբերելու պահից 2 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային նամակագրության կամ հեռախոսային կապի միջոցով՝ հայտատուի ընտրած եղանակով հայտատուին առաջարկում է 5 աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թերությունները և փաստաթղթերը ներկայացնել լիազոր մարմին:

III. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

- 13. Լիցենզիա ստանալու մասին հայտը մերժվում է, եթե՝
 - 1) ներկայացված հայտը և կից փաստաթղթերը թերի են և չեն լրացվել սույն կարգի 12-րդ կետով նախատեսված ժամկետում կամ դրանցում առկա են ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված տեղեկություններ կամ,
 - 2) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքի, այլ իրավական ակտերի և սույն կարգի պահանջներին կամ,
 - 3) իրավաբանական անձն օրենքի կամ իր կանոնադրության համաձայն իրավունք չունի զբաղվելու հայցվող լիցենզավորման ենթակա գործունեությամբ կամ,
 - 4) դեղերի մեծածախ իրացման համար նախատեսված տարածքը սեփականության, վարձակալության, ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով չի պատկանում հայտատուին կամ չի ներկայացվել իրավասու մարմնի կողմից հայտատուի անվամբ տրված գործունեության համար նախատեսված տարածքի հատակագիծը կամ,
 - 5) փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրվել է բացասական փորձագիտական եզրակացություն.
 - 6) պետական տուրքը չվճարվելու դեպքում՝ պետական տուրքը չվճարելու հիմքով.
 - 7) սույն կարգի 12-րդ կետով նախատեսված ժամկետում լիազոր մարմին չի ներկայացվել դրական փորձագիտական եզրակացությունը:
- 14. Լիցենզիա ստանալու հայտը մերժվելու մասին որոշումն ընդունվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային կամ փաստաթղթային եղանակով առաքվում է հայտատուին:
- 15. Դեղերի մեծածախ իրացման լիցենզիայի նոր ներդիրի տրամադրումը լիցենզավորող մարմինը մերժում է, եթե՝
 - 1) փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրվել է բացասական փորձագիտական եզրակացություն կամ,
 - 2) սույն կարգի 12-րդ կետով նախատեսված ժամկետում լիազոր մարմին չի ներկայացվել դրական փորձագիտական եզրակացությունը:
- 16. Ներդիրի մերժվելու մասին որոշումն ընդունվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային կամ

փաստաթղթային եղանակով առաքվում է հայտատուին:

IV. ԴԵՂԵՐԻ ՄԵԾԱԾԱԽ ԻՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐԸ

17. Դեղերի մեծածախ իրացման լիցենզիայի ներդիրը ներառում է տեղեկատվություն իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անվանման, դեղերի մեծածախ իրացման լիցենզիայի սերիան և համարը, կոնտակտային տվյալների, գործունեության տեսակի (տեսակների), մատակարարի կողմից մեծածախ իրացման ենթակա՝ պահպանման ընդհանուր պայմանները բավարարող դեղերի կամ արյան բաղադրիչներ և դրանցից ստացվող դեղերի կամ իմունաբանական դեղերի կամ ռադիոակտիվ դեղերի կամ բժշկական գազերի կամ սառցային շղթա պահանջող դեղերի մասին, ինչպես նաև փորձագիտական եզրակացության համարը, ամսաթիվը և տեղ այլ նշումների համար:

Ձև N 1

ԴԵՂԵՐԻ ՄԵԾԱԾԱԽ ԻՐԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐԸ

- 1. Իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը
- 2. Գտնվելու (իրավաբանական անձանց դեպքում), բնակության (անհատ ձեռնարկատերերի դեպքում) վայրը
- 3. Դեղերի մեծածախ իրացման լիցենզիայի սերիան և համարը
- 4. Հեռախոսահամարը
- 5. Էլ. փոստի հասցե
- 6. Ինտերնետային կայք (առկայության դեպքում)

1. Դեղերի մեծածախ իրացման գործունեության շրջանակը 1.1. սերիայի հավաստագրում 1.2. մատակարարում առանց սերիայի հավաստագրման
2. Դեղերի մեծածախ իրացման գործունեության տեսակը 2.1. ձեռքբերում 2.2. ներմուծում 2.3. արտահանում 2.4. պահպանում 2.5. իրացում (բաշխում)
3. Մատակարարվող դեղային խումբ՝ 3.1. պահպանման ընդհանուր պայմանները բավարարող դեղեր 3.2. արյան բաղադրիչներ և արյունից ստացված դեղեր 3.3. իմունաբանական դեղեր 3.4. ռադիոակտիվ դեղեր (ներառյալ ռադիոնուկլիդային հավաքածուներ) 3.5. բժշկական գազեր 3.6. սառցային շղթա պահանջող դեղեր (դեղեր, որոնց համար պահանջվում է պահպանման սառը պայմաններ՝ 2-8 ⁰ C կամ 8-15 ⁰ C) 3.7. այլ արտադրանքներ (նկարագրել)

Փորձագիտական եզրակացության համարը, ամսաթիվը
Այլ նշումներ

Ձև N 2

ՀՀ առողջապահության նախարար
_____ին
(անունը, ազգանունը)

Հ Ա Յ Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՄԵԾԱԾԱԽ ԻՐԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

- 1. Իրավաբանական անձի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)

2. Գործունեության իրականացման վայրը _____

3. Իրավաբանական անձի պետական գրանցման համարը կամ անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման համարը
□□□□□□□□□□

4. Իրավաբանական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) էլեկտրոնային փոստի հասցեն և ինտերնետային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում) և հեռախոսահամարը

5. Դեղերի մեծածախ իրացման գործունեության շրջանակ

- ձեռքբերում
- ներմուծում
- արտահանում
- պահպանում
- իրացում (բաշխում)

6. Վճարված է պետական տուրք (նշում կատարվում է պետական տուրքը նախապես վճարված լինելու դեպքում)՝
 այո

7. Կից ներկայացնում եմ (պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկ)՝
լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականը և իրավասու մարմնի կողմից հայտատուի անվամբ տրված՝ գործունեության համար նախատեսված տարածքի հատակագիծը,
փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրված դրական փորձագիտական եզրակացություն

Ներկայացված տեղեկությունների իսկությունը հաստատում եմ՝

_____ (կազմակերպության տնօրենի (անհատ ձեռնարկատիրոջ) ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ 20 թ.

(ձևը խմբ. 15.07.21 N 1138-Ն)

Ձև N 3

ՀՀ առողջապահության նախարար _____-ին
(անունը, ազգանունը)

Հ Ա Յ Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՄԵԾԱԾԱԽ ԻՐԱՑՄԱՆ ԱՅԼ ՎԱՅՐՈՒՄ ԵՎ Ս ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Իրավաբանական անձի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)

2. Գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը _____

3. Իրավաբանական անձի պետական գրանցման համարը կամ անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման համարը
□□□□□□□□□□

4. Գործող լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, սերիան և համարը

5. Իրավաբանական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) էլեկտրոնային փոստի հասցեն և ինտերնետային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում) և հեռախոսահամարը

6. Դեղերի մեծածախ իրացման գործունեության շրջանակ

- ձեռքբերում
- ներմուծում
- արտահանում

- պահպանում
- իրացում (բաշխում)
- 7. Վճարված է պետական տուրք (նշում կատարվում է պետական տուրքը նախապես վճարված լինելու դեպքում)՝

այո

8. Կից ներկայացնում եմ (պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկ)՝

լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականը և իրավասու մարմնի կողմից հայտատուի անվամբ տրված՝ գործունեության համար նախատեսված տարածքի հատակագիծը, փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրված դրական փորձագիտական եզրակացություն:

Ներկայացված տեղեկությունների իսկությունը հաստատում եմ՝

_____ (կազմակերպության տնօրենի (անհատ ձեռնարկատիրոջ) ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ 20 թ.

(ձևը խմբ. 15.07.21 N 1138-Ն)

Ձև N 4

ՀՀ առողջապահության նախարար
_____ -ին
(անունը, ազգանունը)

Հ Ա Յ Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՄԵԾԱԾԱԽ ԻՐԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Իրավաբանական անձի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)

2. Գործունեության իրականացման վայրը _____

3. Իրավաբանական անձի պետական գրանցման համարը կամ անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման համարը
□□□□□□□□

4. Գործող լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, սերիան և համարը

5. Իրավաբանական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) էլեկտրոնային փոստի հասցեն և ինտերնետային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում) և հեռախոսահամարը

6. Դեղերի մեծածախ իրացման գործունեության շրջանակ

- ձեռքբերում
- ներմուծում
- արտահանում
- պահպանում
- իրացում (բաշխում)

- գ. Ստոմատոլոգիական նեգատասկոպ (կարող է ներառված լինել նաև համասարքի կազմում)
- դ. Ատամնանատվածքների հեռացման համար նախատեսված սարք (կարող է ներառված լինել նաև համասարքի կազմում)
- ե. Լուսապլոլիմերիզացնող լամպ (կարող է ներառված լինել նաև համասարքի կազմում)
- զ. Ատամնանատվածքների մեխանիկական հեռացման համար նախատեսված գործիքների հավաքածու
- է. Արմատախողովակների մեխանիկական մշակման համար նախատեսված գործիքների հավաքածու (Էնդոդոնթիա)
- ը. Ստոմատոլոգիական գործիքների հավաքածու
- թ. Բռների, ֆրեզների, քարերի, սկավառակների հավաքածու
- ժ. Վերին և ստորին ծնոտների ատամների հեռացման համար նախատեսված արքանների և ամբարձիչների հավաքածու
- ժա. Վիրաբուժական ստոմատոլոգիական գործիքների հավաքածու
- ժբ. Ատամի արհեստական պսակները հանելու համար նախատեսված գործիք (կոպ)
- ժգ. Կլորաշուրթ արքան (կրամպոն)
- ժդ. Դրոշմագդալների հավաքածու
- ժե. Նշտար, նշտարաբռնիչ

5) Օրթոպեդիկ ստոմատոլոգիական ծառայություն`

- ա. Ստոմատոլոգիական նեգատասկոպ (կարող է ներառված լինել նաև համասարքի կազմում)
- բ. Լուսապլոլիմերիզացնող լամպ (կարող է ներառված լինել նաև համասարքի կազմում)
- գ. Դրոշմագդալների հավաքածու
- դ. Ատամի արհեստական պսակները հանելու համար նախատեսված գործիք (կոպ)
- ե. Նշտար, նշտարաբռնիչ
- զ. Ստոմատոլոգիական գործիքների հավաքածու
- է. Դրոշմանյութի շաղախման ռետինե թաս
- ը. Բռների, ֆրեզների, քարերի, սկավառակների հավաքածու
- թ. Դրոշմանյութի շաղախման մածկիչ (շպատել)
- ժ. Կլորաշուրթ արքան (կրամպոն)

6) Օրթոդոնտիկ ստոմատոլոգիական ծառայություն`

- ա. Լուսապլոլիմերիզացնող լամպ (կարող է ներառված լինել նաև համասարքի կազմում)
- բ. Բռների, ֆրեզների, քարերի, սկավառակների հավաքածու
- գ. Անշարժ և շարժական օրթոդոնտիկ տեխնիկայով աշխատելու համար նախատեսված գործիքների հավաքածու
- դ. Դրոշմագդալների հավաքածու
- ե. Նեգատասկոպ
- զ. Ատամնանատվածքների հեռացման համար նախատեսված սարք (կարող է ներառված լինել նաև համասարքի կազմում)

Վերոնշյալ ծառայությունների տեխնիկական հագեցվածությունում կրկնվող սարքավորումներն ու գործիքները կարող են ներկայացվել մեկ օրինակով:

13.2. ԿԱԴՐԱՅԻՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ

13.2.1. Բժիշկ-ստոմատոլոգ` համապատասխան հետբուհական մասնագիտացմամբ և վերջին 5 տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և ժամկետներում շարունակական մասնագիտական զարգացման հավաստագրի առկայությամբ

13.2.2. Միջին բուժաշխատող` վերջին 5 տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և ժամկետներում շարունակական մասնագիտական զարգացման հավաստագրի առկայությամբ

13.3.3. Կրտսեր բուժաշխատող

13.4.4. վերջին 5 տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և ժամկետներում շարունակական մասնագիտական զարգացման հավաստագրի առկայությամբ բժիշկ-ստոմատոլոգ կամ բժիշկ-ճառագայթային խխորոշիչ կամ բժիշկ-ռենտգենոլոգ կամ ռենտգեն-լաբորանտ կամ միջին բուժաշխատող` համապատասխան վերապատրաստմամբ:

(հավելվածը լրաց. 26.01.23 N 120-Ն)

Հավելված N 17
ՀՀ կառավարության 2002 թվականի
հունիսի 29-ի N 867 որոշման

Կ Ա Ր Գ

ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից լիցենզավորման ենթակա բժշկական արտադրատեսակների արտադրության լիցենզավորման կարգը՝ համաձայն «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) պահանջների:

2. Հայաստանի Հանրապետությունում բժշկական արտադրատեսակների արտադրության համար լիցենզիան տալիս (մերժում) է, լիցենզիայի գործողությունը կասեցնում կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում դադարեցնում է Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական լիազոր մարմինը՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ լիազոր մարմին):

3. Բժշկական արտադրատեսակների արտադրության, այլ վայրում ևս բժշկական արտադրատեսակների արտադրության, բժշկական արտադրատեսակների արտադրության վայրի փոփոխման լիցենզիաների կամ նոր ներդիրի տրամադրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի նոյեմբերի 24-ի N 1795-Ն որոշմամբ սահմանված փորձաքննություն իրականացնող կազմակերպության (այսուհետ՝ փորձաքննություն իրականացնող կազմակերպություն) կողմից տրված դրական փորձագիտական եզրակացության հիման վրա:

4. Բժշկական արտադրատեսակների արտադրության լիցենզիաները տրվում են օրենքով և սույն կարգով նախատեսված բոլոր փաստաթղթերը ներկայացվելուց հետո 23 աշխատանքային օրվա ընթացքում:

5. Սույն կարգի համաձայն տրված լիցենզիաները գործում են միայն լիցենզիայում նշված վայրում:

6. Բժշկական արտադրատեսակների արտադրության լիցենզիայի հետ մեկտեղ տրամադրվում է սույն կարգով սահմանված ձևի ներդիր՝ համաձայն N 1 ձևի:

7. Լիցենզիայի վերաձևակերպումը կամ գործողության կասեցումը կամ դադարեցումը կատարվում են օրենքով սահմանված կարգով:

8. Բժշկական արտադրատեսակների արտադրության լիցենզիա ստացած անձինք ոչ ուշ, քան յուրաքանչյուր կիսամյակին հաջորդող ամսվա տասներորդ աշխատանքային օրը լիազոր մարմին են ներկայացնում հաշվետվություն արտադրվող բժշկական արտադրատեսակների մասին՝ համաձայն սույն կարգի N 5 ձևի:

2. ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԵՆՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

9. Հայտատուն բժշկական արտադրատեսակների արտադրության լիցենզավորման համար օրենքի համաձայն ներկայացնում է՝

1) լիցենզիա ստանալու մասին հայտ՝ համաձայն N 2 ձևի.

2) լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականը և իրավասու մարմնի կողմից հայտատուի անվամբ տրված գործունեության համար նախատեսված տարածքի հատակագիծը.

3) փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրված դրական փորձագիտական եզրակացություն:

10. Այլ վայրում ևս բժշկական արտադրատեսակների արտադրության կամ բժշկական արտադրատեսակների արտադրության վայրի փոփոխման դեպքում լիցենզավորված անձը լիազոր մարմին է ներկայացնում՝

1) այլ վայրում ևս բժշկական արտադրատեսակների արտադրության լիցենզիա ստանալու կամ բժշկական արտադրատեսակների արտադրության վայրի փոփոխման մասին հայտ՝ համաձայն NN 3 և 4 ձևերի.

2) այլ վայրում ևս բժշկական արտադրատեսակների արտադրության կամ բժշկական արտադրատեսակների արտադրության վայրի փոփոխման դեպքում լիցենզավորված անձի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականը և հայտատուի անվամբ (անվանմամբ) տրված՝ գործունեության համար նախատեսված տարածքի հատակագիծը.

3) փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրված դրական փորձագիտական եզրակացություն.

4) լիցենզիայի բնօրինակը՝ գործունեության իրականացման վայրի փոփոխման դեպքում:

11. Նոր ներդիրի տրամադրման համար լիցենզավորված անձը լիազոր մարմին է ներկայացնում՝

1) դիմում նոր ներդիր ստանալու մասին.

2) փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրված դրական փորձագիտական եզրակացություն:

12. Բժշկական արտադրատեսակների արտադրության լիցենզիա ստանալու, այլ վայրում ևս բժշկական արտադրատեսակների արտադրության լիցենզիա ստանալու կամ բժշկական արտադրատեսակների արտադրության վայրի փոփոխման մասին հայտերում կամ կից փաստաթղթերում ոչ էական թերությունների (վրիպակների, ոչ իրավաբանական անձությունների, թվաբանական սխալների և նման այլ բացթողումների) առկայության, ինչպես նաև փաստաթղթերը թերի լինելու դեպքում լիցենզավորող մարմինը դրանք հայտնաբերելու պահից 2 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային նամակագրության կամ հեռախոսային կապի միջոցով՝ հայտատուի ընտրած եղանակով հայտատուին առաջարկում է 5 աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թերությունները և փաստաթղթերը

ներկայացնել լիազոր մարմին:

3. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

13. Լիցենզիա ստանալու մասին հայտը մերժվում է, եթե՝

- 1) ներկայացված հայտը և կից փաստաթղթերը թերի են և չեն լրացվել սույն կարգի 12-րդ կետով նախատեսված ժամկետում, կամ դրանցում առկա են ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված տեղեկություններ կամ,
- 2) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքի, այլ իրավական ակտերի և սույն կարգի պահանջներին կամ,
- 3) իրավաբանական անձն օրենքի կամ իր կանոնադրության համաձայն իրավունք չունի զբաղվելու հայցվող լիցենզավորման ենթակա գործունեությամբ կամ,
- 4) բժշկական արտադրատեսակների արտադրության համար նախատեսված տարածքը սեփականության, վարձակալության, ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով չի պատկանում հայտատուին, կամ չի ներկայացվել իրավասու մարմնի կողմից հայտատուի անվամբ տրված գործունեության համար նախատեսված տարածքի հատակագիծը կամ,
- 5) փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրվել է բացասական փորձագիտական եզրակացություն:
- 6) պետական տուրքը չվճարվելու դեպքում՝ պետական տուրքը չվճարելու հիմքով:
- 7) սույն կարգի 12-րդ կետով նախատեսված ժամկետում լիազոր մարմին չի ներկայացվել դրական փորձագիտական եզրակացությունը:

14. Լիցենզիա ստանալու հայտը մերժելու մասին որոշումն ընդունվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային կամ փաստաթղթային եղանակով առաքվում է հայտատուին:

15. Բժշկական արտադրատեսակների արտադրության լիցենզիայի նոր ներդիրի տրամադրումը լիցենզավորող մարմինը մերժում է, եթե՝

- 1) փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրվել է բացասական փորձագիտական եզրակացություն կամ,
- 2) սույն կարգի 12-րդ կետով նախատեսված ժամկետում լիազոր մարմին չի ներկայացվել դրական փորձագիտական եզրակացությունը:

16. Ներդիրի տրամադրումը մերժելու մասին որոշումն ընդունվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային կամ փաստաթղթային եղանակով առաքվում է հայտատուին:

4. ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐԸ

17. Բժշկական արտադրատեսակների արտադրության լիցենզիայի ներդիրը ներառում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անվանման, կոնտակտային տվյալների, գործունեության տեսակի մասին տեղեկատվություն, բժշկական արտադրատեսակների արտադրության լիցենզիայի սերիան և համարը, և տեղ այլ նշումների համար:

5. ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

18. Փորձաքննության համար արտադրողը դիմում է փորձաքննություն իրականացնող կազմակերպություն՝ կամ հայերենով, կամ ռուսերենով, կամ անգլերենով (ՊԻԴԲԷՖ (PDF) ձևաչափով ֆայլերի տեսքով)՝ կամ առձեռն, կամ էլեկտրոնային հասցեով, կամ էլեկտրոնային համակարգի միջոցով, կամ փոստային առաքմամբ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերի տեսաներածված պատճենները՝

- 1) արտադրվող բժշկական արտադրատեսակների ցանկը և ընդհանուր նկարագիրը՝ համաձայն N 7 ձևի:
- 2) Ստանդարտացման միջազգային կազմակերպության 13485 ստանդարտի (Բժշկական արտադրատեսակներ. Որակի կառավարման համակարգեր. Կանոնակարգման նպատակների համար պահանջներ) (այսուհետ՝ ISO 13485) պահանջներին համապատասխան ստեղծված և գործող որակի կառավարման համակարգի հավաստագիրը, հավաստագրման մարմնի կողմից վերջին աուդիտի արդյունքների մասին հաշվետվության պատճենը: ISO 13485-ին համապատասխան որակի կառավարման համակարգի առկայությունը պարտադիր չէ այն դեպքում, երբ հայտատուն ունի վավեր պատշաճ արտադրական գործունեության հավաստագիր և նույն արտադրատարածքում կազմակերպում է այնպիսի բժշկական արտադրատեսակների արտադրություն, որոնց նկարագիրը համընկնում է իր կողմից արտադրվող դեղերի արտադրության կանոնակարգում ներկայացված տեղեկություններին:
- 3) պայմանագրային արտադրողների և լաբորատոր հետազոտություն իրականացնողների գործունեության վայրերը, հեռախոսահամարները:
- 4) կազմակերպագործառնական կառուցվածքը:
- 5) արտադրատարածքների հատակագծերը, նյութերի և անձնակազմի հոսքերը, յուրաքանչյուր արտադրատեսակի

արտադրության հակիրճ սխեման.

6) հիմնական արտադրական և որակի հսկման սարքավորումների ցանկը.

7) բժշկական արտադրատեսակների արտադրության գործող լիցենզիայի պատճենը (առկայության դեպքում):

19. Փորձաքննությունն սկսվում է փորձաքննության վարձի վճարման փաստը հավաստող փաստաթղթի առկայության դեպքում:

20. Փորձաքննության ընթացքում կարող են պահանջվել լրացուցիչ տվյալներ, որոնք ներկայացնելու ժամանակահատվածը փորձաքննության համար սահմանված ժամկետում չի ներառվում:

21. Փորձաքննության ընթացքում լրացուցիչ տվյալներ կամ փաստաթղթեր ներկայացնելու անհրաժեշտության մասին պատշաճ կարգով արտադրողին տեղեկացնելուց հետո 60 աշխատանքային օրվա ընթացքում դրանք չներկայացնելու դեպքում փորձաքննությունը դադարեցվում է, և կազմվում է փորձագիտական եզրակացություն փորձաքննության իրականացման անհնարինության վերաբերյալ:

22. Անկախ փորձաքննության արդյունքից՝ ներկայացված փաստաթղթերը և վճարը չեն վերադարձվում:

23. Փորձաքննությունը և արտադրատարածքի ընդհանուր դիտարկումն իրականացվում են՝ առաջնորդվելով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2017 թվականի նոյեմբերի 10-ի N 106 որոշմամբ:

24. Փորձաքննության արդյունքների հիման վրա կազմակերպությունը, դիմումը ստանալուց հետո առավելագույնը 20 աշխատանքային օրվա ընթացքում, կազմում և արտադրողին է տրամադրում փորձաքննության եզրակացությունը՝ կցելով N 6 ձևով նախատեսված ձևաչափի փորձաքննության հաշվետվությունը: Փորձաքննության եզրակացությունը և կից հաշվետվությունն արտադրողին են տրվում էլեկտրոնային փոստի միջոցով կամ փոստային առաքմամբ:

Ձև N 1

ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐԸ

Պետք է պարունակի հետևյալ տվյալները.

1. Իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը
2. Գտնվելու (իրավաբանական անձանց դեպքում), բնակության (անհատ ձեռնարկատերերի դեպքում) վայրը
3. Բժշկական արտադրատեսակների արտադրության լիցենզիայի սերիան և համարը
4. Հեռախոսահամարը
5. Էլ. փոստի հասցեն
6. Ինտերնետային կայքը (առկայության դեպքում)
7. Փորձագիտական եզրակացության համարը, ամսաթիվը
8. Տեղեկություններ բժշկական արտադրատեսակի վերաբերյալ.

1.	Բժշկական արտադրատեսակի անվանումը (տեսակի/խմբի անվանումը)	
2.	Բժշկական արտադրատեսակի նշանակությունը	
3.	Բժշկական արտադրատեսակը In vitro ախտորոշման համար նախատեսված արտադրատեսակ է	<input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ
4.	Բժշկական արտադրատեսակի կիրառման ոլորտը (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2019 թվականի ապրիլի 16-ի թիվ 62 որոշմամբ հաստատված՝ բժշկական արտադրատեսակների բժշկական կիրառման ոլորտների դասակարգչին համապատասխան)	
5.	Բժշկական արտադրատեսակի կիրառման հնարավոր ռիսկի դասը	
6.	Բժշկական արտադրատեսակի տեսակի ծածկագիրը (Եվրասիական տնտեսական միության բժշկական արտադրատեսակների անվանացանկի համաձայն, որի վարման կանոնները հաստատված են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2015 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 177 որոշմամբ)	

7.	Բժշկական արտադրատեսակի կազմում առկա է դեղանյութ: Առկայության դեպքում նշել դեղանյութը(երը):	<input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ																
8.	Բժշկական արտադրատեսակը ստերիլ է: Բժշկական արտադրատեսակը ստերիլ լինելու դեպքում նշել ստերիլիզացման եղանակը:	<input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ																
9.	Բժշկական արտադրատեսակի մոդելը (մակնիշը), դրա կազմն ու պարագաները																	
	<table border="1"> <thead> <tr> <th>NN ը/կ</th> <th>Անվանումը</th> <th>Արտադրողը</th> <th>Երկիրը</th> </tr> </thead> <tbody> <tr> <td>1.</td> <td>Բժշկական արտադրատեսակի մոդելը (մակնիշը) (առկայության դեպքում)</td> <td></td> <td></td> </tr> <tr> <td>2.</td> <td>Կազմը (առկայության դեպքում)</td> <td></td> <td></td> </tr> <tr> <td>3.</td> <td>Պարագաները (առկայության դեպքում)</td> <td></td> <td></td> </tr> </tbody> </table>	NN ը/կ	Անվանումը	Արտադրողը	Երկիրը	1.	Բժշկական արտադրատեսակի մոդելը (մակնիշը) (առկայության դեպքում)			2.	Կազմը (առկայության դեպքում)			3.	Պարագաները (առկայության դեպքում)			
NN ը/կ	Անվանումը	Արտադրողը	Երկիրը															
1.	Բժշկական արտադրատեսակի մոդելը (մակնիշը) (առկայության դեպքում)																	
2.	Կազմը (առկայության դեպքում)																	
3.	Պարագաները (առկայության դեպքում)																	
10.	Շահագործման Պահպանման ժամկետը (երաշխիքային ժամկետը)																	
11.	Պահման պայմանները																	
12.	Արտադրությունը	<input type="checkbox"/> ամբողջությամբ տվյալ արտադրությունում <input type="checkbox"/> մասամբ տվյալ արտադրությունում <input type="checkbox"/> ամբողջությամբ այլ արտադրությունում																

Այլ նշումներ _____

Ձև N 2

ՀՀ առողջապահության նախարար _____-ին
(անունը, ազգանունը)

Հ Ա Յ Տ

ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Իրավաբանական անձի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)

2. Գործունեության իրականացման վայրը _____

3. Իրավաբանական անձի պետական գրանցման համարը կամ անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման համարը
□□□□□□□□□□

4. Իրավաբանական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) էլեկտրոնային փոստի հասցեն և ինտերնետային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում) և հեռախոսահամարը

5. Վճարված է պետական տուրք (նշում կատարվում է պետական տուրքը նախապես վճարված լինելու դեպքում)՝
 այո

6. Կից ներկայացնում եմ (պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկ)՝
լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականը և իրավասու մարմնի կողմից հայտատուի անվամբ տրված՝ գործունեության համար նախատեսված տարածքի հատակագիծը, փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրված դրական փորձագիտական եզրակացությունը:

Ներկայացված տեղեկությունների իսկությունը հաստատում եմ՝

(կազմակերպության տնօրենի (անհատ ձեռնարկատիրոջ) ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ 20 թ.

Ձև N 3

ՀՀ առողջապահության նախարար
_____ -ին
(անունը, ազգանունը)

Հ Ա Յ Տ

ԱՅԼ ՎԱՅՐՈՒՄ ԵՎ Մ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՄՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Իրավաբանական անձի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)

2. Գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը _____

3. Իրավաբանական անձի պետական գրանցման համարը կամ անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման համարը
□□□□□□□□□□

4. Գործող լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, սերիան և համարը

5. Իրավաբանական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) էլեկտրոնային փոստի հասցեն և ինտերնետային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում) և հեռախոսահամարը

6. Վճարված է պետական տուրք (նշում կատարվում է պետական տուրքը նախապես վճարված լինելու դեպքում)՝
 այո

7. Կից ներկայացնում եմ (պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկ)՝
լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականը և իրավասու մարմնի կողմից հայտատուի անվամբ տրված՝ գործունեության համար նախատեսված տարածքի հատակագիծը, փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրված դրական փորձագիտական եզրակացությունը:

Ներկայացված տեղեկությունների իսկությունը հաստատում եմ՝

_____ (կազմակերպության տնօրենի (անհատ ձեռնարկատիրոջ) ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ 20 թ.

Ձև N 4

ՀՀ առողջապահության նախարար
_____ -ին
(անունը, ազգանունը)

Հ Ա Յ Տ

ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Իրավաբանական անձի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)

2. Գործունեության իրականացման վայրը _____

3. Իրավաբանական անձի պետական գրանցման համարը կամ անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման համարը
□□□□□□□□□□

4. Վայրի փոփոխման համար ներկայացված լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, սերիան և համարը

5. Իրավաբանական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) էլեկտրոնային փոստի հասցեն և ինտերնետային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում) և հեռախոսահամարը

6. Կից ներկայացնում եմ (պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկ)՝ լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականը և իրավասու մարմնի կողմից հայտատուի անվամբ տրված՝ գործունեության համար նախատեսված տարածքի հատակագիծը, փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրված դրական փորձագիտական եզրակացությունը, լիցենզիայի բնօրինակը:

Ներկայացված տեղեկությունների իսկությունը հաստատում եմ՝

(կազմակերպության տնօրենի (անհատ ձեռնարկատիրոջ) ստորագրությունը, անունը, ազգանունը)

20 թ.

Ձև N 5

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԱՐՏԱԴՐՎՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը

NN ը/կ	Արտադրվող բժշկական արտադրատեսակի անվանումը	Չափման միավորը	Մերիան	Քանակը

օրը, ամիսը, տարեթիվը

(իրավաբանական անձի տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ ստորագրությունը)

Ձև N 6

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Բժշկական արտադրատեսակների արտադրության լիցենզավորման նպատակով փորձաքննության արդյունքների մասին

1.	Հաշվետվության համարը	
2.	Բժշկական արտադրատեսակն արտադրողի մասին տեղեկատվություն.	
2.1.	Իրավաբանական անձի լրիվ և կրճատ (առկայության դեպքում) անվանումը, կազմակերպաիրավական ձևը և հասցեն (գտնվելու վայրը), կոնտակտային տվյալները	
2.2.	Արտադրատարածքների ցանկը (նշելով դրանց հասցեներն ու արտադրվող բժշկական արտադրատեսակները, որակի կառավարման գնահատվող համակարգի շրջանակներում գործընթացներին մասնակցող աշխատակիցների մոտավոր թվաքանակը, ինչպես նաև կոնտակտային տվյալները)	
2.3.	Արտադրվող բժշկական արտադրատեսակների ցանկը	

2.4.	Այն բժշկական արտադրատեսակների տեսակների (ենթատեսակների) ցանկը, որոնց մասով անցկացվում է արտադրության դիտարկում՝ բժշկական արտադրատեսակն արտադրողի հայտի համաձայն	
2.5.	Կրիտիկական նշանակություն ունեցող մատակարարների ցանկը (նշելով նրանց հասցեները, մատակարարվող արտադրատեսակները կամ մատուցվող ծառայությունները, ինչպես նաև կոնտակտային տեղեկատվությունը)	
3.	Փորձաքննության մասին տեղեկատվություն.	
3.1.	Փորձաքննության անցկացման ամսաթիվը	
3.2.	Մասնագիտական խմբի կազմը (նշելով խմբի անդամների գործառույթները)	
4.	Փորձաքննության արդյունքները (ստուգված յուրաքանչյուր օբյեկտի համար).	
4.1.	Ստուգվող գործունեության կամ տեխնոլոգիական գործընթացների ընդհանուր նկարագրությունը	
4.2.	Հարցված անձանց ազգանունները, անունները, հայրանունները (առկայության դեպքում) և պաշտոնները	
4.3.	Բժշկական արտադրատեսակների կիրառման հնարավոր ռիսկից կախված՝ դրանց որակի կառավարման համակարգի առկայությունը	
5.	Եզրահանգումներ.	
5.1.	Բժշկական արտադրատեսակների արտադրությանը ներկայացվող ընդհանուր պահանջներին համապատասխանության (անհամապատասխանության) մասին եզրակացություն, ըստ դիտարկման նպատակի	
6.	Փորձագետների ազգանունները, անունները, հայրանունները (առկայության դեպքում) և պաշտոնները	
7.	Ստորագրությունները, կնիքը (առկայության դեպքում)	

Ձև N 7

Ց Ա Ն Կ

ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ ՊԱՐՏԱԴՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Հայտատուի անունը, ազգանունը կամ անվանումը _____

2. Կազմակերպական-իրավական ձևը _____

3. Գտնվելու (բնակվելու) և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարները, էլեկտրոնային փոստի և ինտերնետային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում)

4. Փորձագիտական եզրակացության համարը, օրը, ամիսը, տարեթիվը _____

5. Տեղեկություն բժշկական արտադրատեսակի վերաբերյալ

1.	Բժշկական արտադրատեսակի անվանումը (տեսակի/խմբի անվանումը)	
2.	Բժշկական արտադրատեսակի նշանակությունը	

<p>3. In vitro ախտորոշման համար նախատեսված բժշկական արտադրատեսակ</p>	<p><input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ</p>															
<p>4. Բժշկական արտադրատեսակի կիրառման ոլորտը (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2019 թվականի ապրիլի 16-ի թիվ 62 որոշմամբ հաստատված՝ բժշկական արտադրատեսակների բժշկական կիրառման ոլորտների դասակարգչին համապատասխան)</p>																
<p>5. Բժշկական արտադրատեսակի կիրառման պոտենցիալ ռիսկի դասը</p>																
<p>6. Բժշկական արտադրատեսակի տեսակի ծածկագիրը (Եվրասիական տնտեսական միության բժշկական արտադրատեսակների անվանացանկի համաձայն, որի վարման կանոնները հաստատված են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2015 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 177 որոշմամբ)</p>																
<p>7. Կա՞րպոզ բժշկական արտադրատեսակի կազմում դեղանյութ: Առկայության դեպքում նշել դեղանյութը/դեղանյութերը:</p>	<p><input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ</p>															
<p>8. Բժշկական արտադրատեսակը ստերիլ է: Բժշկական արտադրատեսակը ստերիլ լինելու դեպքում նշել ստերիլիզացման եղանակը:</p>	<p><input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ</p>															
<p>9. Բժշկական արտադրատեսակի մոդելը (մակնիշը), դրա կազմն ու պարագաները</p> <table border="1" data-bbox="212 1870 1445 2024"> <thead> <tr> <th data-bbox="212 1870 316 1906">Համարը</th> <th data-bbox="316 1870 1198 1906">Անվանումը</th> <th data-bbox="1198 1870 1353 1906">Արտադրողը</th> <th data-bbox="1353 1870 1445 1906">Երկիրը</th> </tr> </thead> <tbody> <tr> <td data-bbox="212 1906 316 1942">1.</td> <td data-bbox="316 1906 1198 1942">Բժշկական արտադրատեսակի մոդելը (մակնիշը) (առկայության դեպքում)</td> <td data-bbox="1198 1906 1353 1942"></td> <td data-bbox="1353 1906 1445 1942"></td> </tr> <tr> <td data-bbox="212 1942 316 1977">2.</td> <td data-bbox="316 1942 1198 1977">Կազմը (առկայության դեպքում)</td> <td data-bbox="1198 1942 1353 1977"></td> <td data-bbox="1353 1942 1445 1977"></td> </tr> <tr> <td data-bbox="212 1977 316 2024">3.</td> <td data-bbox="316 1977 1198 2024">Պարագաները (առկայության դեպքում)</td> <td data-bbox="1198 1977 1353 2024"></td> <td data-bbox="1353 1977 1445 2024"></td> </tr> </tbody> </table>	Համարը	Անվանումը	Արտադրողը	Երկիրը	1.	Բժշկական արտադրատեսակի մոդելը (մակնիշը) (առկայության դեպքում)			2.	Կազմը (առկայության դեպքում)			3.	Պարագաները (առկայության դեպքում)		
Համարը	Անվանումը	Արտադրողը	Երկիրը													
1.	Բժշկական արտադրատեսակի մոդելը (մակնիշը) (առկայության դեպքում)															
2.	Կազմը (առկայության դեպքում)															
3.	Պարագաները (առկայության դեպքում)															

10.	Շահագործման, պահպանման ժամկետը (երաշխիքային ժամկետը)	
11.	Պահման պայմանները	
12.	Արտադրությունը	<input type="checkbox"/> ամբողջությամբ տվյալ արտադրությունում <input type="checkbox"/> մասամբ տվյալ արտադրությունում <input type="checkbox"/> ամբողջությամբ այլ արտադրությունում

Ներկայացված տեղեկությունների իսկությունը հաստատում եմ՝

(հայտատու իրավաբանական անձի անվանումը, տնօրենի անունը, ազգանունը, ստորագրությունը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, ստորագրությունը)

(օրը, ամիսը, տարեթիվը)

(հավելվածը լրաց. 23.03.23 N 359-Ն)

Հավելված N 18
ՀՀ կառավարության 2002 թվականի
հունիսի 29-ի N 867 որոշման

Ձև N 1



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԼԻՑԵՆԶԻԱ Կ-ԲԱԱ-000000**

Տրված՝ _____ 20 թվականին

Գործունեության տեսակը **ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

Իրավաբանական անձի անվանումը և գտնվելու վայրը

Գործունեության իրականացման վայրը

Գործողության ժամկետը՝ մինչև

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի լիցենզավորման գործակալության պետ

_____ (ստորագրությունը)



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԼԻՑԵՆԶԻԱ Ա-ԲԱԱ-000000**

Տրված՝ _____ 20 թվականին

Գործունեության տեսակը **ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

Անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և բնակության վայրը

Գործունեության իրականացման վայրը

Գործողության ժամկետը՝ մինչև

Հայաստանի Հանրապետության առողջապահության
նախարարության աշխատակազմի լիցենզավորման
գործակալության պետ

_____ (ստորագրությունը)

(հավելվածը լրաց. 23.03.23 N 359-Ն)

Հավելված N 19
ՀՀ կառավարության 2002 թվականի
հունիսի 29-ի N 867 որոշման

Կ Ա Ր Գ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից լիցենզավորման ենթակա բժշկական արտադրատեսակների սպասարկման լիցենզավորման կարգը՝ համաձայն «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) պահանջների:
2. Հայաստանի Հանրապետությունում բժշկական արտադրատեսակների սպասարկման համար լիցենզիան տալիս (մերժում) է, լիցենզիայի գործողությունը կասեցնում կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում դադարեցնում է Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական լիազոր մարմինը՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ լիազոր մարմին):
3. Բժշկական արտադրատեսակների սպասարկման, այլ վայրում ևս բժշկական արտադրատեսակների սպասարկման, բժշկական արտադրատեսակների սպասարկման վայրի փոփոխման լիցենզիաների կամ նոր ներդիրի

տրամադրումն իրականացվում է փորձաքննություն իրականացնելու լիցենզիա ունեցող անձի (այսուհետ՝ փորձաքննություն իրականացնող կազմակերպություն) կողմից տրված դրական փորձագիտական եզրակացության հիման վրա:

4. Բժշկական արտադրատեսակների սպասարկման լիցենզիաները տրվում են օրենքով և սույն կարգով նախատեսված բոլոր փաստաթղթերը ներկայացվելուց հետո 23 աշխատանքային օրվա ընթացքում:

5. Բժշկական արտադրատեսակների սպասարկման լիցենզիայի հետ մեկտեղ տրամադրվում է սույն կարգով սահմանված ձևի ներդիր՝ համաձայն N 1 ձևի:

2. ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՀԱՏ ԶԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

6. Հայտատուն բժշկական արտադրատեսակների սպասարկման լիցենզավորման համար օրենքի համաձայն ներկայացնում է՝

1) լիցենզիա ստանալու մասին հայտ՝ համաձայն N 2 ձևի.

2) լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականը և իրավասու մարմնի կողմից հայտատուի անվամբ տրված գործունեության համար նախատեսված տարածքի հատակագիծը.

3) փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրված դրական փորձագիտական եզրակացություն:

7. Այլ վայրում ևս բժշկական արտադրատեսակների սպասարկման կամ բժշկական արտադրատեսակների սպասարկման վայրի փոփոխման դեպքում լիցենզավորված անձը լիազոր մարմին է ներկայացնում՝

1) այլ վայրում ևս բժշկական արտադրատեսակների սպասարկման լիցենզիա ստանալու կամ բժշկական արտադրատեսակների սպասարկման վայրի փոփոխման մասին հայտ՝ համաձայն NN 3 և 4 ձևերի.

2) այլ վայրում ևս բժշկական արտադրատեսակների սպասարկման կամ բժշկական արտադրատեսակների սպասարկման վայրի փոփոխման դեպքում լիցենզավորված անձի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականը և հայտատուի անվամբ (անվանմամբ) տրված՝ գործունեության համար նախատեսված տարածքի հատակագիծը.

3) փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրված դրական փորձագիտական եզրակացություն.

4) լիցենզիայի բնօրինակը՝ գործունեության իրականացման վայրի փոփոխման դեպքում:

8. Նոր ներդիրի տրամադրման համար լիցենզավորված անձը լիազոր մարմին է ներկայացնում՝

1) դիմում նոր ներդիր ստանալու մասին.

2) փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրված դրական փորձագիտական եզրակացություն:

9. Բժշկական արտադրատեսակների սպասարկման լիցենզիա ստանալու, այլ վայրում ևս բժշկական արտադրատեսակների սպասարկման լիցենզիա ստանալու կամ բժշկական արտադրատեսակների սպասարկման վայրի փոփոխման մասին հայտերում կամ կից փաստաթղթերում ոչ էական թերությունների (վրիպակների, ոչ իրավաբանական անճշտությունների, թվաբանական սխալների և նման այլ բացթողումների) առկայության, ինչպես նաև փաստաթղթերը թերի լինելու դեպքում լիցենզավորող մարմինը դրանք հայտնաբերելու պահից 2 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային նամակագրության կամ հեռախոսային կապի միջոցով՝ հայտատուի ընտրած եղանակով հայտատուին առաջարկում է 5 աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թերությունները և փաստաթղթերը ներկայացնել լիազոր մարմին:

3. ԼԻՑԵՆԶԻԱՑԻ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

10. Լիցենզիա ստանալու մասին հայտը մերժվում է, եթե՝

1) ներկայացված հայտը և կից փաստաթղթերը թերի են և չեն լրացվել սույն կարգի 9-րդ կետով նախատեսված ժամկետում կամ դրանցում առկա են ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված տեղեկություններ կամ,

2) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքի, այլ իրավական ակտերի և սույն կարգի պահանջներին կամ,

3) իրավաբանական անձն օրենքի կամ իր կանոնադրության համաձայն իրավունք չունի զբաղվելու հայցվող լիցենզավորման ենթակա գործունեությամբ կամ,

4) բժշկական արտադրատեսակների սպասարկման համար նախատեսված տարածքը սեփականության, վարձակալության, ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով չի պատկանում հայտատուին կամ չի ներկայացվել իրավասու մարմնի կողմից հայտատուի անվամբ տրված գործունեության համար նախատեսված տարածքի հատակագիծը կամ,

5) փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրվել է բացասական փորձագիտական եզրակացություն.

6) պետական տուրքը չվճարվելու դեպքում՝ պետական տուրքը չվճարելու հիմքով.

7) սույն կարգի 9-րդ կետով նախատեսված ժամկետում լիազոր մարմին չի ներկայացվել դրական փորձագիտական եզրակացությունը:

- 11. Լիցենզիա ստանալու հայտը մերժելու մասին որոշումն ընդունվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային կամ փաստաթղթային եղանակով առաքվում է հայտատուին:
- 12. Բժշկական արտադրատեսակների սպասարկման լիցենզիայի նոր ներդիրի տրամադրումը լիցենզավորող մարմինը մերժում է, եթե՝
 - 1) փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրվել է բացասական փորձագիտական եզրակացություն կամ,
 - 2) սույն կարգի 9-րդ կետով նախատեսված ժամկետում լիազոր մարմին չի ներկայացվել դրական փորձագիտական եզրակացությունը:
- 13. Ներդիրի տրամադրումը մերժելու մասին որոշումն ընդունվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային կամ փաստաթղթային եղանակով առաքվում է հայտատուին:

4. ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐԸ

14. Բժշկական արտադրատեսակների սպասարկման լիցենզիայի ներդիրը ներառում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անվանման, կոնտակտային տվյալների, գործունեության տեսակի մասին տեղեկատվություն, բժշկական արտադրատեսակների արտադրության լիցենզիայի սերիան և համարը, և տեղ այլ նշումների համար:

5. ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

15. Փորձաքննության համար արտադրողը դիմում է փորձաքննություն իրականացնող կազմակերպություն՝ կամ հայերենով, կամ ռուսերենով, կամ անգլերենով (ՊԻԴԷՖ (PDF) ձևաչափով ֆայլերի տեսքով)՝ կամ առձեռն, կամ էլեկտրոնային հասցեով, կամ էլեկտրոնային համակարգի միջոցով, կամ փոստային առաքմամբ՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերի տեսաներածված պատճենները՝

- 1) բժշկական արտադրատեսակների սպասարկման գործող լիցենզիայի պատճենը (առկայության դեպքում)։
- 2) հայտարարագիր մատուցվող ծառայությունների մասին, ծառայությունների ոլորտի և բնույթի վերաբերյալ տեղեկություններով։
- 3) բժշկական արտադրատեսակների որակի կառավարման համակարգի հավաստագիրը, հավաստագրման մարմնի կողմից վերջին աուդիտի արդյունքների մասին հաշվետվության պատճենը։
- 4) կազմակերպագործառնական կառուցվածքը։
- 5) գործունեության տարածքի հատակագծերը։
- 6) օգտագործվող գործիքների, սարքերի և սարքավորումների ցանկը։
- 7) սպասարկվող բժշկական արտադրատեսակների ցանկը։
- 8) այն բժշկական արտադրատեսակների ենթատեսակների ցանկը, որոնց մասով անցկացվում է սպասարկման վայրի և պայմանների դիտարկում:

16. Փորձաքննությունն սկսվում է փորձաքննության վարձի վճարման փաստը հավաստող փաստաթղթի առկայության դեպքում:

17. Փորձաքննության ընթացքում կարող են պահանջվել լրացուցիչ տվյալներ, որոնք ներկայացնելու ժամանակահատվածը փորձաքննության համար սահմանված ժամկետում չի ներառվում:

18. Փորձաքննության ընթացքում լրացուցիչ տվյալներ կամ փաստաթղթեր ներկայացնելու անհրաժեշտության մասին պատշաճ կարգով արտադրողին տեղեկացնելուց հետո 60 աշխատանքային օրվա ընթացքում դրանք չներկայացնելու դեպքում փորձաքննությունը դադարեցվում է, և կազմվում է փորձագիտական եզրակացություն դիմումը մերժելու վերաբերյալ:

19. Անկախ փորձաքննության արդյունքից՝ ներկայացված փաստաթղթերը և վճարը չեն վերադարձվում:

20. Փորձաքննությունն իրականացվում է՝ առաջնորդվելով բժշկական արտադրատեսակների անվտանգությանը, որակին և արդյունավետությանը ներկայացվող ընդհանուր պահանջներով:

21. Փորձաքննության արդյունքների հիման վրա կազմակերպությունը, դիմումը ստանալուց հետո առավելագույնը 20 աշխատանքային օրվա ընթացքում, կազմում և արտադրողին է տրամադրում փորձաքննության եզրակացությունը՝ կցելով N 5 ձևով նախատեսված ձևաչափի փորձաքննության հաշվետվությունը: Փորձաքննության եզրակացությունը և կից հաշվետվությունն արտադրողին է տրվում էլեկտրոնային փոստի միջոցով կամ փոստային առաքմամբ:

Ձև N 1

ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐԸ

- 1. Իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը
- 2. Գտնվելու (իրավաբանական անձանց դեպքում), բնակության (անհատ ձեռնարկատերերի դեպքում) վայրը

- 3. Բժշկական արտադրատեսակների սպասարկման լիցենզիայի սերիան և համարը
- 4. Հեռախոսահամարը
- 5. Էլ. փոստի հասցեն
- 6. Ինտերնետային կայքը (առկայության դեպքում)
- 7. Փորձագիտական եզրակացության համարը, ամսաթիվը
- 8. Տեղեկություններ սպասարկման գործընթացի մասին

1.	Սպասարկման գործընթացում ընդգրկված տարածքների ցանկը (նշելով դրանց հասցեներն ու որակի կառավարման գնահատվող համակարգի շրջանակներում գործընթացներին մասնակցող աշխատակիցների մոտավոր թվաքանակը, ինչպես նաև կոնտակտային տվյալները)	
2.	Սպասարկվող բժշկական արտադրատեսակների ցանկը	
3.	Այն բժշկական արտադրատեսակների ենթատեսակների ցանկը, որոնց մասով անցկացվում է սպասարկման վայրի և պայմանների դիտարկում՝ հայտի համաձայն	

Այլ նշումներ _____

Ձև N 2

ՀՀ առողջապահության նախարար _____-ին
(անունը, ազգանունը)

Հ Ա Յ Տ

ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՄՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Իրավաբանական անձի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)

2. Գործունեության իրականացման վայրը _____

3. Իրավաբանական անձի պետական գրանցման համարը կամ անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման համարը
□□□□□□□□□□

4. Իրավաբանական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) էլեկտրոնային փոստի հասցեն և ինտերնետային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում) և հեռախոսահամարը

5. Վճարված է պետական տուրք (նշում կատարվում է պետական տուրքը նախապես վճարված լինելու դեպքում)՝
□ այո

6. Կից ներկայացնում եմ (պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկ)՝
լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականը և իրավասու մարմնի կողմից հայտատուի անվամբ տրված՝ գործունեության համար նախատեսված տարածքի հատակագիծը, փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրված դրական փորձագիտական եզրակացությունը:

Ներկայացված տեղեկությունների իսկությունը հաստատում եմ՝

_____ (կազմակերպության տնօրենի (անհատ ձեռնարկատիրոջ) ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ 20 թ.

Ձև N 3

ՀՀ առողջապահության նախարար _____-ին
(անունը, ազգանունը)

Հ Ա Յ Տ

ԱՅԼ ՎԱՅՐՈՒՄ ԵՎ Ս ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Իրավաբանական անձի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)

2. Գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը _____

3. Իրավաբանական անձի պետական գրանցման համարը կամ անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման համարը
□□□□□□□□□□

4. Գործող լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, սերիան և համարը

5. Իրավաբանական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) էլեկտրոնային փոստի հասցեն և ինտերնետային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում) և հեռախոսահամարը

6. Վճարված է պետական տուրք (նշում կատարվում է պետական տուրքը նախապես վճարված լինելու դեպքում)՝
 այո

7. Կից ներկայացնում եմ (պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկ)՝

լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականը և իրավասու մարմնի կողմից հայտատուի անվամբ տրված՝ գործունեության համար նախատեսված տարածքի հատակագիծը, փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրված դրական փորձագիտական եզրակացությունը:

Ներկայացված տեղեկությունների իսկությունը հաստատում եմ՝

(կազմակերպության տնօրենի (անհատ ձեռնարկատիրոջ) ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ 20 թ.

Ձև N 4

ՀՀ առողջապահության նախարար
_____ ին
(անունը, ազգանունը)

Հ Ա Յ Տ

ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԱՅՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Իրավաբանական անձի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)

2. Գործունեության իրականացման վայրը _____

3. Իրավաբանական անձի պետական գրանցման համարը կամ անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման համարը
□□□□□□□□□□

4. Գործող լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, սերիան և համարը

5. Իրավաբանական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) էլեկտրոնային փոստի հասցեն և ինտերնետային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում) և հեռախոսահամարը

6. Վայրի փոփոխման համար ներկայացված լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, սերիան և համարը

7. Կից ներկայացնում եմ (պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկ)՝

լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականը և իրավասու մարմնի կողմից հայտատուի անվամբ տրված՝ գործունեության համար նախատեսված տարածքի հատակագիծը, փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրված դրական փորձագիտական եզրակացությունը, լիցենզիայի բնօրինակը:

Ներկայացված տեղեկությունների խսկությունը հաստատում եմ՝

(կազմակերպության տնօրենի (անհատ ձեռնարկատիրոջ) ստորագրությունը, անունը, ազգանունը)

20 թ.

Ձև N 5

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Բժշկական արտադրատեսակների սպասարկման լիցենզավորման նպատակով փորձաքննության արդյունքների մասին

1.	Հաշվետվության համարը	
2.	Բժշկական արտադրատեսակների սպասարկողի մասին տեղեկատվություն.	
2.1.	Իրավաբանական անձի լրիվ և կրճատ (առկայության դեպքում) անվանումը, կազմակերպաիրավական ձևը և հասցեն (գտնվելու վայրը), կոնտակտային տվյալները	
2.2.	Սպասարկման գործընթացում ընդգրկված տարածքների ցանկը (նշելով դրանց հասցեներն ու որակի կառավարման գնահատվող համակարգի շրջանակներում գործընթացներին մասնակցող աշխատակիցների մոտավոր թվաքանակը, ինչպես նաև կոնտակտային տվյալները)	
2.3.	Սպասարկող բժշկական արտադրատեսակների ցանկը	
2.4.	Այն բժշկական արտադրատեսակների տեսակների (ենթատեսակների) ցանկը, որոնց մասով անցկացվում է սպասարկման վայրի և պայմանների դիտարկում՝ հայտի համաձայն	
3.	Փորձաքննության մասին տեղեկատվություն.	
3.1.	Փորձաքննության անցկացման ամսաթիվը	
3.2.	Մասնագիտական խմբի կազմը (նշելով խմբի անդամների գործառույթները)	
4.	Փորձաքննության արդյունքները (ստուգված յուրաքանչյուր օբյեկտի համար).	
4.1.	Ստուգվող գործունեության կամ տեխնոլոգիական գործընթացների ընդհանուր նկարագրությունը	
4.2.	Հարցված անձանց ազգանունները, անունները, հայրանունները (առկայության դեպքում) և պաշտոնները	
4.3.	Բժշկական արտադրատեսակների կիրառման հնարավոր ռիսկից կախված՝ դրանց որակի կառավարման համակարգի առկայությունը	
5.	Եզրահանգումներ.	
5.1.	Բժշկական արտադրատեսակների սպասարկմանը ներկայացվող ընդհանուր պահանջներին համապատասխանության (անհամապատասխանության) մասին եզրակացություն, ըստ դիտարկման նպատակի	
6.	Փորձագետների ազգանունները, անունները, հայրանունները (առկայության դեպքում) և պաշտոնները	
7.	Ստորագրությունները, կնիքը (առկայության դեպքում)	

(հավելվածը լրաց. 23.03.23 N 359-Ն)

Հավելված N 20
ՀՀ կառավարության 2002 թվականի
հունիսի 29-ի N 867 որոշման

Ձև N 1



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԼԻՑԵՆԶԻԱ Կ-ԲԱՍ-000000**

Տրված՝ _____ 20 թվականին

Գործունեության տեսակը ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Իրավաբանական անձի անվանումը և գտնվելու վայրը

Գործունեության իրականացման վայրը

Գործողության ժամկետը՝ վինչև

Հայաստանի Հանրապետության առողջապահության
նախարարության աշխատակազմի լիցենզավորման
գործակալության պետ

_____ (ստորագրությունը)

Ձև N 2



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԼԻՑԵՆԶԻԱ Ա-ԲԱՍ-000000**

Տրված՝ _____ 20 թվականին

Գործունեության տեսակը ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և բնակության վայրը

Գործունեության իրականացման վայրը

Գործողության ժամկետը՝ մինչև

Հայաստանի Հանրապետության առողջապահության
նախարարության աշխատակազմի լիցենզավորման
գործակալության պետ

(ստորագրությունը)

(հավելվածը լրաց. 23.03.23 N 359-Ն)